

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Լիբանանի Հայոց Ազգ. առաջնորդարանի Քաղաքական ժողովը, Լիբանանի թեմի բարեջան առաջնորդ Տ. Գեղամ եպ. Խաչերեանի նախագահությամբ, երեքշաբթի, 6 Մայիս 2003ի երեկոյան գումարում իր հերթական նիստին, օրակարգի ընթացիկ հարցերու կողքին հանգամանորեն նաև անդրադարձաւ հայութեան եւ բովանդակ մարդկութեան ուղղուած այն անարգ ոգիին, որուն գոհ գնաց հայութեան եւ իրաւաբանութեան ժողովուրդներու մեծ բարեկամ՝ բրիտանացի հանրաժանութեան լրագրող-բեմադրիչ ձեյմա Միլլըր, երբ պաղեստինեան բռնագրաւեալ շրջաններուն մէջ կը նկարահանէր իսրայէլեան պուլտղոզներու գործած աւերները:

Հայկական Ցեղասպանութիւնը եւ Թուրքիոյ ուրացման քաղաքականութիւնը լուսարձակի տակ առած «Արմինիա - Տը Պիթրէյտ» վաւերագրական ժապաւեցի բրիտանացի հեղինակ-բեմադրիչ ձեյմա Միլլըր, որ ակամատես ալ լրագրողներու վկայութեամբ տեղի ունեցանցեալ Ռւրբաթ օր, իսրայէլեան բանակի փամփուշտով, բիրտբող անգամ ըլլալով կը փաստէ, որ վիրաւորին շտապ օգնութիւնը արգիւած իսրայէլեան ցեղապաշտ քաղաքականութիւնը բարոյական ու մարդկային ո՛չ մէկ հիմք ունի:

Խոր ընդվզումով դատապարտել է երբ միջազգային բազմաթիւ մրցանակներու արժանացած ձեյմա Միլլըրի վայրագ սպանութիւնը, Լիբանանի Ազգ. առաջնորդարանը կը վերահաստատէ, որ անգէն մանուկներու, ծերունիներու եւ լրագրողներու սառնասիրտ սպանութեամբ կարելի չէ գերեզմանել պաղեստինցի ժողովուրդին արդար իրաւունքները, եւ թէ միայն երկխօսութեամբ կարելի է լուծում բերել ժողովուրդներու միջեւ առկա հարցերուն, եւ այս պարագային՝ պաղեստինեան հարցին:

ԳԻՒՆ ԱՉԳԱԿԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԱՆԻ

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿ

Այսու կը հաղորդենք, որ ամեն տարի Լիբանանի հայ կաթողիկէ վարժարաններէն մեկական աշակերտի առիթ պիտի տրուի այցելելու Հայաստան, ամառնային արձակուրդի ընթացքին:

Հայ կաթողիկէ պատրիարքարանի հովանաւորութեամբ, աշակերտներու ընտրութիւնը պիտի կատարուի մրցութային կարգով, որ կը հիմնուի հայերէն լեզուի եւ հայոց պատմութեան անոնց իմացութեան վրայ:

Սոյն նախաձեռնութիւնը կը միտի զարգացնել լիբանանահայ մեր սերունդին յարաբերութիւնները Մայր հայրենիքին ու հայրենաբնակ երիտասարդութեան հետ, ինչպէս նաեւ քաջալերել մեր աշակերտները՝ առաւել ուշադրութեան արժանացնելու հայագիտական նիւթերը:

ՏՆՕՐԵՆՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԿԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ Պեյրուս, 5 Մայիս 2003

ՊԱՏՄԱՐԱՆ ԸՆԼՄԱՐ ՔԱՅՁԸՐԻ ԸՆԴԻՊՈՒՄ - ԶՐՈՅՑԸ

Շ.Բ.Ը.Մ. «ՏԵՄԻՐՃԵԱՆ» ԿԵՂՈՒՆԻՆ ՄԵՋ

Երեքշաբթի, 6 Մայիս 2003ին, կազմակերպութեամբ Շ.Բ.Ը.Մ. - Շ.Ե.Ը.Ի Երիտասարդ Արհեստավարներու եւ Համալսարանականներու Համախմբումին, գերմանացի պատմաբան Հիլմար Քայլըր ներկայացուց շահեկան դասախօսութիւն մը՝ «Հայ ժողովուրդի բռնագրաւուած տեփական հողերն ու ինչքերը Հայկական Ցեղասպանութեան ընթացքին» նիւթին շուրջ:

Պատմաբանը, որ Լիբանան կը գտնուի Ամերիկեան համալսարանի հայ ուսանողութեան հրաւերով, դասախօսութիւններու շարք մը ներկայացուց Հայոց Ցեղասպանութեան մասին իր կատարած գիտական ու իրաւական ուսումնասիրութիւններու շուրջ:

Կազմակերպող վարչութեան կողմէ Հրանդ Տանձիկեան ներկայացուց օրան դասախօսը:

Դոկտ. Հիլմար, որ մասնագէտ է Օսմանեան կայսրութեան վերջին շրջանի պատմութեան, գիտական լուրջ վերլուծումով եւ հետաքրքրական ու մատչելի ոճով մը ներկայացուց իր նիւթը, շեշտելով ցեղասպանութեան ենթարկուած հայոց իրաւունքներու անժամանցելիութիւնը եւ իրաւական գետնի վրայ միջապային առեւտրներու մէջ պահանջատիրութեան հետապնդման կարելիութիւնները, թուելով այս մարզին մէջ իր կատարած աշխատանքը:

Չեռնարկի վերջին բաժինով, դասախօսը հանգամանօրէն պատասխանեց ներկաներու հարցումներուն:

ԹՐԻՓՈՒԽ

ՊԱՅԹՈՒՄ՝ ՀՈՒՆՏԱՑԻ ՊԱՏՈՒԵԼԻԻ ՄԸ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ

Նախանցեալ օր, երեկոյեան ուշ ժամերուն, Թրիփուլի մէջ պայթում մը պատճառեց Կոն մը եւ վիրաւոր մը:



Պայթումը արձանագրուեցաւ հոլանտացի աւետարանական պատուելիի մը բնակարանին կից պետեղուած ականի մը (2 քկ.) պատճառով: Պատուելին՝ ձեռքով Կրիկիլըն (52 տարեկան), կը բնակի այդ բնակարանին մէջ, իր գերմանացի կնոջ եւ երեք պաւակներուն հետ:

Պայթումը նիւթական մեծ վնասներ պատճառեց նաեւ Թրիփուլիի Բըպպէ շրջանին մէջ գտնուող բնակարաններու եւ ինքնաշարժներու:

Պայթումին պատճառով մահացաւ յորդանանցի մը՝ Ժամի Ռիֆահի եւ վիրաւորուեցաւ պատուելի Կրիկիլընի ինսամեայ պաւակը:

Միւս կողմէ, ձեռքաւորուեցաւ եգիպտացի մը, որ կը գտնուէր գետնայարկ բնակարանին մէջ, պայթումէն տնք:

Շրջանի ապահովական տարբեր ուժեր գումարեցին ժողով մը եւ մինչեւ առաւօտ հարկ եղած բոլոր միջոցառումներուն դիմեցին:

Ապահովական ուժերը պաշարեցին բնակարանը եւ կատարեցին ձեռքաւորութիւններ:

Ըստ նախնական արդիւնքներու, պատուելին եւ իր կինը յայտնած են, թէ նշեալ պայթումին հեղինակը Ահմէտ անունով անձ մըն է, որ կ'այցելէր իրենց բնակարանը եւ Սայտայէն կու գար՝ ներկայ ըլլալու անոնց քարոզներուն...

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄԱՐՈՆԻ Եպիսկոպոսներու Խորհուրդը երէկ Պերքէի մէջ գումարեց իր հերթական ժողովը, նախագահութեամբ Սֆէյր պատրիարքին:

Ժողովին քննարկուեցան ազգային եւ եկեղեցույ առնչուող հարցեր:

Ժողովէն ետք մարոնի պատրիարքութեան ընդհանուր քարտուղար Եուսէֆ Թոք Եպիսկոպոս ընթերցեց ժողովին հրապարակած հաղորդագրութիւնը, որուն մէջ նկատել տուաւ, որ Մարոնի Եպիսկոպոսներու Խորհուրդը հակառակ Լիբանանի տնտեսութիւնը բարելաւելու բոլոր ջանքերուն, ներդրումներուն եւ տրուած խոստումներուն, տակաւին կը մնայ տագնապալի:

Թոք շեշտեց, որ Լիբանանի մէջ տեղի ունեցած անցեալ շաբաթուան ցոյցերուն ընթացքին բանակին եւ ապահովութեան ուժերուն կողմէ երիտասարդներու եւ ուսանողներու հանդէպ ցուցաբերած վերաբերումը կը փաստէ, որ Լիբանանի մէջ խօսքի ապստոյթեան օրէնքը չէ յարգուած եւ հարց տուաւ, թէ Լիբանան ի՞նչ արժէք կրնայ ունենալ առանց այդ ապստոյթեան:

Թոք յոյս յայտնեց, որ կառավարութիւնը կ'ըլլայ ազգային միասնականութեան կառավարութիւն մը:

ՕՍՄԱՐ ՔԱՐԱՄԷԷ երէկ Պէյրութի իր բնակարանին մէջ ընդունեց Միասնականութեան կուսակցութեան նախագահ Էմիլ Ռահմէն, որուն հետ քննարկեց ներքին եւ շրջանային հարցերը:

Քարամէ շեշտեց, որ ներկայիս Եպիսկոպոսութեամբ, նկատել տալով, որ տարբեր համայնքներու պատկանող լիբանանցիներ քաջածանօթ են այս ռազմավարութեան եւ լաւ գիտեն, որ անիկա ներքին համերաշխութեան միակ պայմանն է:

Քարամէ վերահաստատեց իր յոռետեսութիւնը Լիբանանի տնտեսական կացութեան գծով եւ կոչ ուղղեց բոլորին՝ կառչած մնալու եւ հետեւելու մարտնչներու Նասրալլա Սֆէյր պատրիարքի կեցումածրններուն:

ՊԵՏԱԿԱՆ նախարար Թալալ Արայան երէկ այցելեց Հրպալայի կեդրոնատեղի, ուր հանդիպում մը ունեցաւ Հրպալայի ընդհանուր քարտուղար Շէյխ Հասան Նասրալլայի հետ:

Հանդիպումին քննարկուեցան ահաբեկչութեան դէմ Միացեալ Նահանգներու կողմէ մղուող պայքարը եւ տեղական ու շրջանային իրադարձութիւններ: Արայան շեշտեց, որ ամէն գնով անհրաժեշտ է պահպանել դիմադրութիւնը եւ պորակցիլ անոր առաքելութեան:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ ԾԱԽՈՒ 3ԱՐԿԱԲԱԺԻՆ

Մարի Գագանձեանի մահուան առիթով, տեր եւ տիկին տոքթ. Յակոբ Լոզոյեան 50,000 լ. ո. «Բարսեղ Կանաչեան» երաժշտական ընկէճին:

ԿՈՒՉՈՒԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Ոսկերչատուն մը կարիքը ունի փորձառու եւ վարպետ քար գամողներու եւ մոմի վրայ աշխատող օրիորդներու: Դիմել՝ 01-240262:

ԳՐԱԲՈՒՄԸ ՕՐ

Լ. ԵՒ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ ԱՉԳ. ԲՈՒԼԵԾ 28 ՅՈՒՆԻՍ 2003 GRAND HILLS VILLAGE

ՍԱՐԿԱԿԱԳԱՅ ԶԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՋ

Յառաջիկայ Կիրակի, 11 Մայիսին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ տեղի պիտի ունենայ Սարկազական ձեռնագրութիւն: Սարկազ պիտի ձեռնագրուին Դարեմաճի սաներէն Տիգրան Անտիսեան, Սարգիս Պետրոսեան, Սիրահան Պերթիզեան եւ Արթի Բէշիչեան:

Ձեռնագրութիւնը պիտի կատարէ եւ բարոզ՝ ԳԵՐՇ. Տ. ԵՓՐԵՄ ԱՐՔ. ԹԱՊԱԳԵԱՆ

Արարողութեան պիտի հանդիսապետէ՝ Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Սիրով կը իրաւորի հաւատացեալ ժողովուրդը՝ մասնակից դառնալու ձեռնագրութեան հոգեպարար արարողութեան եւ իր ներկայութեամբ քաջալերելու ընծայեալ սաները:

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

365 ՕՐԵՆԸ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՑԻՆ

Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինները կը ստանձնեն օրուան մը ձաշի ծախսը, 300 տողարով: Տեր եւ տիկին Յակոբ եւ Իգապէլ Աբրահամեան (իրենց հորաքրոջ՝ Մարի Պաղտասարեանի մահուան Ա. տարելիցին առիթով):

ՅԱՏՈՒԿ ԱՌԻԹ ՄԷՆ ՄԱՐՔԻ ՄԷՋ

LIBANAISE (CROIX ROUGE LIBANAISE) ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՈՍԿՐԱՓՏՈՒՄԻ (OSTEOPOROSIS - WHOLE BODY) ԱՆՏԱՃԱՆԱՉՄԱՆ ԱՐՇԱԿԸ ԳՈՐԾԱԿՑԱԲԱՐ ՄԷՆ ՄԱՐՔԻ ԿԵՂՈՒՆՆԵՐՈՒ ԸՏ (ԺԵԸԹԱՈՒԻ - ԶԱԼԵԱ) ԿԸ ԶԱՐՈՒՆԱԿՈՒԻ ԴՐԱԿԱՆ ՄԵԾ ԱՐՁԱԳԱՆԳՈՎ ՄԱՅԻՍ ԵՒ ՅՈՒՆԻՍ ԱՄԻՍՆԵՐՈՒՆ ԱԼ: ԸԱՅ ԸՏԱԶԵՐԵՐՈՒՈՂՆԵՐ ՆԱԵՒ ԿՐՆԱՆ ՕԳՏՈՒԻԼ ԱՅՍ ԱՌԻԹԵՆ, ԴԻՄԵԼՈՎ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՈՐԵԻԷ ԿԵՂՈՒՆ, ԱՄԲՈՂՋ ԼԻԲԱՆԱՆԻ ՏԱՐԱԾԵԻՆ, ԿՃԱՐԵԼՈՎ 100 ՏՈՒԱՐԻ ՓՈԽԱՐԵՆ ՄԻԱՅՆ 20 ՏՈՒԱՐ: Որեւէ պարզաբանութեան համար դիմել՝ ՄԷՆ ՄԱՐՔԻ՝ 01/566633 - 01/576565:




FUEL CARDը գործածեցէք

Պենզինի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւղը փոխելու կամ զանոնք լուալու պարագային: Երբ մագուրթ պիտի գնէք, գործածեցէք FUEL CARDը՝ հեռաձայնելով 04 / 715111 - 222 - 333 թիւերուն:

- MANAR - Տորա
ՍԱՐԳԻՍԵԱՆ - Պուրճ Յամուտ
BASSIL - Տորա, կամուրջի մօտ
AKEL եւ BASSIL - Տորա, «Քրետի Լիպանէ»ի մօտ
SPEED - Յանքաշ, Կալէրի Իթթիատ
ՉԱՅԿԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ - «Ալմագա»
MALLAH - Անթիլիաս, կաթողիկոսարանի դիմաց
MALLAH - Յարթ Ղաուարնէ
MALLAH - Պալիմ
MALLAH - Ժալ էլ Տիպի մայրուղի
CORAL - Էշրեֆիէ, Ս. Յակոբ Եկեղեցույ մօտ
SAAD - Մար Միայել
SPEED - Նահր, «Փէօօ» ընկերութեան մօտ
PHOENICIA - Այնճարի մուտքին
MALLAH - Պապատէք

ԿԻՉԵՆ ԶԱՔԱՐԵԱՆԻ ՆԱԿԱՍԱԿՈՒԹԵԱՆ 11ԱՍԵԱԿԻՆ ԱՌԻՈՎ

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՈՒՂԻԻ ՅԱԵՐԺԱՅՈՒՄ



8 Մայիս 1992ին, Արցախի գլխավոր քաղաք-ներից՝ Շուշիի ազատագրումից ետք, ուշագրու-թյունը կը կեղծահայտող Լաչինի ճամբով Մայր Հայաստանի հետ աշխարհագրական պարտակապ մը ունենալու որոշումին վրայ: Այլևս հասած էր այն պահը, երբ հաշվառող արտադրող իր իսկ ձեռքերով պիտի վերահաստատեր պատմական արդարությունը եւ պիտի ջնջեր «այսինչ կամ այ-նինչ» աւագակապեցող ըմբռնող համաձայն գծուած կեղծ սահմանները»:

Եւ հայ ազատամարտիկները ուղղուեցան Լաչին... Լաչինի ճամբուն վրայ, Լիսագորի բարձունք-ներուն, տակաւին իր կեանքի գարունը նոր թե-ւակոխած, պատերազմի դաշտին վրայ ինկար լի-բանանահայ երիտասարդ մը՝ Վիգեն Զաքարեան: Ընկ, Վիգեն Զաքարեանի նահատակութիւնը 11 տարի ետք, կենսական կարեւորութիւններ կայացնող դէպք մըն է: Կրնանք գայն տեսած, իրեն հետ խօսած չըլլալ, անմիջական կապ ու-նեցած չըլլալ այս կենսուրախ հայրենասէր երի-տասարդին հետ, բայց ոեւէ հայ չի կրնար պահ մը չկանգնել անոր անուշիկ առջեւ, չկանգնել անոր լուսանկարին առջեւ, որ կը պատկերէ, թէ ինչպէս իր մարտական ընկերները ուսմբարձ կը տանէին իր բաց դագաղը, մարմինը յանձնե-լու համար յաւերժական հանգիստին՝ Ենարու-րի պանթեոնին մէջ: Ճիշդ անցեալ դարասկիզ-բի ֆիտայական անաղուծեան պէս:

Այո, չենք կրնար չկենալ Վիգեն Զաքարե-անի անուշիկ առջեւ, որովհետեւ հայ նոր սե-րունդներուն համար ան կը ներկայացնէ յանձ-նառու հայ երիտասարդին իրական պատկերը՝ բարձր ամբողջական իմաստով: Վիգեն Զաքար-եանի այս յատկանիշը ի յայտ եկած էր ի մաս-նաւորի Զ.Յ.Դ. Լիբանանի Պատմա-Սիւսի-Սիւսի-Սիւսի, եւ ապա՝ Զ.Յ.Դ. Լեւոնի շարքերուն մէջ: Բայց ան նաեւ յանձնառուութիւնը չսահմա-նափակեց գուտ կամակերպական շրջագիծին մէջ: Անոր հետաքրքրութիւնները ընդգրկեցին նաեւ մշակութիւն ու մարմնակրթութիւնը՝ Հա-մագապահի եւ Զ.Մ.Լ.Սի ճամբով: Բաւական դժուար է խօսել Վիգեն Զաքարե-անի նման կուռ անհատականութիւններու մասին: Այսօր, դաշնակցական երիտասարդութեան գո-հարբութեան նոր օրերու տիպարներէն մէկը եղող մեր ընկերը ներկայ չէ ֆիզիքային, բայց ան, իր ընտանի ազգային-գաղափարական ու-ղիով մտած չէ, ան կ'ապրի մեր մէջ, մինչեւ այն ատեն որ իր երազներէն մէկը եղած Լաչինի ազատագրութիւնը արդէն իսկ իրականացած է եւ արցախահայութիւնը ամբողջովն է իր յաղթա-նակը ազգայնացնողներուն դէմ:

Սակայն, ներկայիս գոյութիւն ունեցող ան-տարբերութիւնը ազգային արժեքներուն նկատ-մամբ, ինչպէս նաեւ համատարած ուժացումը անժամանցելի կը դարձնեն Վիգեն Զաքարեանի նահատակութեան պատգամները: Վիգեն Զաքար-եան իր նահատակութեամբ յաւերժացուց իր որ-դեգրած գաղափարական ուղին:

ԺԱԲ ՅԱԿՈՒԹԵԱՆ

ՅՈՒՆԱՍՏԵԱՆ ԱՄԵՏԻՍ Ս. ԳԱԼԵՄԵԱՐԵԱՆԻ ԸԱՏՈՐԸ ԱՅՆԹԱՊԻ ՀԱՅՈՑ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՒԻՆԵՐԸ ԿԸ ՍԿՍԻՆ

(1 ԱՊՐԻԼ 1920)

Բ) ՊԻԻԼՊԻԻԼ ԶԱՏԷԻ ՏԱՆ ԳՐԱՒՈՒՄԸ, 17 ԱՊՐԻԼ 1920

«Պալազը թաղին մէջ, Ա. եւ Բ. շրջաններուն մի-ջեւ, Պիլիպիւլ Զատէի տունը անառիկ բերդի պէս կ'իշխէր մեր դիրքերուն վրայ: «Էջպահները (տարի-քոտ՝ ոչ-պաշտօնական զի-նակիրներ) թոյլտուութե-թիւն խնդրեցին իրենց ու-ժերով գրաւել այդ շէնքը: Գիտնալով հանդերձ, որ կեղծ էր առաջարկը եւ այդ գործը իրենց կարողութե-նէն շատ վեր, համաձայն-նեցանք: Ո՛չ ոք սակայն տեղէն չարժեցաւ: Օր մը ետք հոն գացինք՝ շրջակայ տունները քննելու եւ գրաւե-ման ծրագիրը կազմելու համար: Շէնքը գրեթէ բո-լորովին մեկուսացած էր իր շրջակայ տուներէն, մէկ անկիւնը միայն միաց-ած էր ուրիշ շէնքի մը՝ ձեռնալարին, որով պէտք էր 7 տուն գրաւել՝ մինչեւ այդ միացած կէտը հասնե-լու համար: Քարեր նետե-ցինք մեր դիրքին կից տան բակին մէջ, եւ ստուգել էտք, որ պարապ էր, առանց երկմտանքի մտանք տունը: այս կեր-պով գրաւեցինք 7 տունը-րը եւ հասանք կցուած ձեռնալարին: Լուր ղրկե-ցինք Ա. շրջանի խմբագրե-տիւն, որ եթէ մէկ անգամ փող չհնչեցնենք, ուժգին կրակ բանան Պիլիպիւլ Զատէի տան վրայ: Յետոյ, երբ երեք անգամ փող չհնչէ՝ դադարեցնեն կրակը: Գործողութիւնները կը վարէինք Բ. շրջանէն: «Երեսուցի Գահլէնեան-ը կանչելով հրահանգե-ցինք ծակել Պիլիպիւլ-Զա-տէի տան պատը: Ատուր կը հսկէր բակին մէջ: Փո-

ղը հնչեց, կրակը բացուե-ցաւ Ա. շրջանէն: Երեսուցի-գործի անցաւ եւ շուտ մը ծակը բացուեցաւ: Մար-մինս մէկ կողմ ըրած, ձեռքս երկարելով ծակին մէջ, քանի մը փամփուշտ արձակեցի սենեակին մէջ՝ ստուգելու համար, թէ մարդ կա՞ թէ ոչ: Կրակը նայեցայ, կարգ մը պղին-ձէ ամաններ կային միայն-ներս ցատկեցի, Յարու-թիւն Թապազեանն ու Երեսուցին ալ ետեւէս հա-սան, այդ սենեակէն ան-ցանք ուրիշ պարապ սենե-ակ մը, որ հրահանգի երեւոյթ ունէր: մեր ծրա-գիրը յաջողած էր: Ձէթէ-ները իրենց բոլոր ուշագ-րութիւնը դէպի Ա. շրջան կեղծոնացուցած էին: մեր բռնու հրահանգով թիւնը մեզ փրկած էր: Հրահանգներն առեւ լի-վան մը կար, հոն ելայ, բայց կին մէջ մարդ չկար, բայց մեր ներքեւը ուրիշ սենե-ակ մը եւս կար: Բակին մէջ ուսումը մը նետեցի-ներքեւի այդ սենեակին երկու մարդիկ բակը ճեղ-ջելով անմիջապէս դիմացի տունը փախան: Բակը իջանք: ուրիշ սենեակներ եւս կային: քանի ըրուումը եւ ձեռք մը հրահանգ ձեռ-կելով մտանք այդ սենե-ակները եւս, բայց սենեա-կի մը ձեռնալարին նշմա-րեցի մարդիկ, որոնք բաց-ած խողով ծակէ մը սո-ղոսկելով փախան դէպի թրանսպիրալի պողոտա-յին միւս կողմէ: Կրակե-ցինք անոնց վրայ, որոնք մէջ Յր ինկն: Տունը գրաւ-ւած էր: Առժամայէս փա-կել տալով յարակից տու-նը տանող ճամբան, սկսանք անհրաժեշտ ամ-րացումները կատարել, որոնք խիստ էական էին


մեր դիրքերուն ապահո-վութեան համար: Թրանս-պիրալի սահմանը հասնե-լու համար կը մնար երկու տուն: Յարող օրուան ձգեցինք այդ երկու տու-նը: Յարող տեղագին զբա-վան հնչեցնել: Կրակը դադարեցաւ Ա. շրջանէն: Գրաւումը վերջացած էր: «Բայց մինչ մէկ կողմէ երբ մենք տեղագին զբա-ղած էինք, միւս կողմէ ամէն կարգի անապօրճի-ներ (կողոպտիչ) տունե-րուն մէջ խուժած էին՝ էջ-պահներու գլխաւորու-թեամբ: Վտանգաւոր կա-ցութիւնը բացատրելով, համոզելով եւ վերջապէս սպառնալով՝ հազիւ կրցանք ցրուել հաւաք-ուած ամբոխը: Բայց նկա-տելով, որ դժուար էր այդ տան մէջ թողուցը պահ-պանել մինչեւ յաջող օրը, անմիջապէս կանչել տուինք Պարենաւորներն եւ Լեւոն Գոյքերու վար-չուցիները: Գումար-տակ մը գինուոր եւ բեռ-տակիրներ տրամադրելով իրենք, բոլոր աւարտա-պել տուինք մինչեւ ուշ գի-շեր: Այդ օրուան հաշուով, այդ տունէն 700 օսմ. ոս-կի արժողութեամբ ուտե-տեղէնի պաշար գրաւուած էր: «Հետեւեալ օրը գրաւե-ցինք երկու տունները եւս, որոնք արդէն լքուած եւ պարապ էին: Թուրքերը նետուած էին գլխաւոր պողոտայէն անդին»:

Պատրաստեց ՎԱՆԵ Ն. ԿԻՒԼԵՍԵՐԵԱՆ

(Մար. 4)

ԳԻՐԵՐՈՒ ԸՏԵ

ՔԵՍԱՊԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ



Անխառն ուրա-խութեամբ կար-դացի Քեսապ հա-յաքաղաքի մերօր-եայ բանաստեղծ Վրէժ Թուրեանի/ Գլընճեանի/ քերթո-ղագիրքերը: Երեք գիրքեր, լոյս տե-սած 1995ին, 1997ին եւ 2003ին: Խոստովանիմ, որ տեղեակ չէի այս բանաստեղծին ստեղծագործա-կան աշխատանք-ներէն: Կը թուի, թէ եղած է հա-մեստ, ու հաւանա-բար ակնկալած, որ ընթերցողներ ի՞նչ պիտի ըսեն իր քերթողական աշ-խատանքներուն մասին: Շարաթ մը առաջ գրասեղանի վրայ ունեցայ յիշեալ բանաստեղծութիւններուն գիրքերը ու կարդացի հե-տաբերութեամբ, նոյն ատեն որոշ գարմանքով, թէ ին-չո՞ւ չուզին մէջ մտնացած է ան: Ան կը նմանի դալար խո-տերու շուքին՝ պահուելու մասնաւորակի, որ կը նայի արեւին, իր խոնարհ դիրքին, եւ բոլոր ու ժպիտ կը բաշ-խէ զինք նկատողին:

Ի՞նչ է թեման, ներշնչման աղբիւրը բանաստեղծ Վրէժ Թուրեանին. Քեսապ հայկական աւանը իր ամբող-ջութեամբ: Իր մարդեղով, մշակութեով, իր եկեղեցւոյ ղո-ղանջներով եւ Մետրոպոլիտանի դպրոցով: Իր ջորեպան-ներով եւ ջրկիրներով, մարած թոնիներով եւ աղբիւրնե-րով, իր անցեալով եւ պատմութեամբ, իր անասուննե-րով, գոմերով եւ խմորչաղող մայրերով: Իրապաշտ եւ նոյն ատեն միաթիւր ու քնարաշունչ: Իմացապաշտ, եւ նոյն ատեն անցեալապաշտ: Ուրախ է ան, որ չէ լքած իր հայրենի օճախը եւ կը շարունակէ ապրել ի՞ր հողին վրայ... Ինչո՞ւ Քեսապի բանաստեղծը, որովհետեւ ան նոյ-նացած է այս հնաւանդ հայկական աւանին բնութեան, ծղիւն ու ջուրին, իրաքանչիւր շարժումին:

Իւրաքանչիւր գիրք ունի իր իւրաքանչիւր խորհուր-դը, ուրկէ կը բխի հայրենասէր ոգեկան գործութիւնը: «Բեկորները» լոյս տեսած է Հայկ, 1995ին: «Հայրենի ղողանջներ» 1997ին, Հայկ, 2003ին: «Մէր, ափսոսանք ու կա-րօ» 2003ին, Հայկ, 2003ին: Այս վերջինը ունի իմա-ցապաշտ խորք ու խորհուրդ: Իւրաքանչիւրը 110 էջի-րու վրայ պարփակուած մօտաւորապէս: Անոնց մէջ տարակէ տրոփի սրտի մը, որ կը բարխէ վասն հայրե-նիքի, հողի կարօտ եւ նոյն խոր ափսոսանք անց-եալի պարզ, բայց բեղուն օրերուն, երբ մարդիկ գի-տէին արժեքը հայրենական արժէքներուն:

Ընթերցողի նկատողութիւնները ամփոփելով, նշելի- են կարգ մը կէտեր՝ քերթողին գրիչին ու խոհեմուն-ը, զգացական աշխարհին տարած թիւն շունչութեամբ: Անց-եալ մը հարուստ ներկայի «խեղճացած» իրականութեան մէջ կը կանգնի բանաստեղծին յիշողութեան մէջ: Այս իրողութիւնը հիմնական խոռովըն ու ստանալուն է քե-րթողին, որ կանգ կ'առնէ աղբիւրի փախին, ուր ջրկիրը իր իշուկով ջուր կը մատակարարէ համայն գիւղի մշակ-ներուն եւ ծարաւած գիւղացիներուն: Այս ամէնը կը նկարագրէ մերօրեան իւրաքանչիւր լեզուով, բառա-կերտումներով, հայոց լեզուին գեղեցկութիւնը փառա-բանող բանաստեղծութեամբ: Այս կ'ըսենք, նկատի առած անոր բառամթերքը, որ տեղ-տեղ եթէ հնաբոյս է, բայց նոյն ատեն նախանձախնդրութիւն կայ հայոց լեզուի բառարանին հանդէպ, ուր բառերը գետեղուած չեն «քնանալու» կամ մոռացուած համար, այլ արժեւոր-ուելու, գոյութեան իրականութիւնը:

Եթէ զգացումներու յորդառու տրամադրութեան արտայայտիչն է «Հայրենի ղողանջներ»-ը մէջ, քնարա-կան շունչով, «Մէր, ափսոսանք եւ կարօ» ժողովածուն կը վկայէ քերթողին իմացական տուեալները, կեանքը փիլիսոփայական ակնոցով դիտելու, նոյն ատեն ափսո-սալով գեղեցկութիւններու նախաձիգին: Երանգաւոր է արտայայտչական իր ոճը. ունի երգի-ծական խմոր, շատ նուրբ շեշտադրութեամբ: Նոյն ատեն առակագրական մարզը կ'ընդգրկէ անցեալը ներ-կային հետ անընդուն իր տագնապը: Չմոռանք բացա-րայէտեաննաեւ, թէ հոլիււդի սրիկային հնչողութիւնը առ-կայ է անոր իւրաքանչիւր էջին մէջ, աշուղտեան երգի մը համն ու բոլոր փոխանցելով գրական իր մթնոլոր-տին: Թերեւս թեմայի կրկնութիւն մը նկատուի իր ար-ծարձած ու շոշափած որոնումներուն մէջ: Այդ ալ վե-րագրելի է ծնունդով բանաստեղծ, խառնուածքով ընու-թեան սիրահար, եւ հոգեկան ազնուութիւնը անրիժ տեսնելու իր տեսիլքին: Ազնիւ հոգիի շունչը կը սաւառ-նի բանաստեղծութեան այս երեք գիրքերուն մէջ, ուր նորարարական ոչ մէկ տրամադրութիւն կայ, ընդհա-կառական, մեր դասական քերթողութեան զնացքին հա-ւատարիմ ճամբայ ելած է, բայց ինքնատիպ ու իւրօր-նակ ստեղծագործութեամբ: Կարելի է իր մէջ գտնել թէ-քէեանական շունչ մը: Մէկ խօսքով՝ գիւղագիր բանա-տեղծ է ան, «հեթաթիւ պատմող» ի նորոգով օժտուած: «Մէր, ափսոսանք եւ կարօ» հատորին յառաջաբա-նին մէջ, «այս հատորին հեղինակը» խորագրուած խօս-քին մէջ թորոս թորանեան գրագէտը այսպէս կը ընու-թեարեանին գործիքը շեղաւ ահեղասաստ չեփոր, շեղա-լուծակ, բայց անպայման եղաւ շուրի, գոր նուագեց կասիրտ լեռան կատարին»:

Արուեստական շարադրանքներէ հետո, անկեղծ սրտի երգն է երգած բանաստեղծը, որ արժանաւորա-պէս այսօր կը նկատուի Քեսապի հարագատ բանաստեղ-ծը, որուն քնարը կը թրթորայ հայաստեղծ լարերով:

ՄԵԾԻ ՏԱՆ ԿԻՒԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԸ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒԹԵԱՆ ՄԷՉ

Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. Կաթողիկոսի Հայրական հոգածութիւնը մեր Դպրե-վանքին նկատմամբ, ար-տաշայտութիւն գտաւ նա-եւ վերանորոգութեան լայնածաւալ աշխատան-քով, որ սկսած է Պիեթրա-յայի մէջ գտնուող Դպրե-վանքի շէնքերուն մէջ:

Այնուհետեւ մինչեւ օրս այս նոր շէնքը կը ծառայէ թեթ յարկերով, յատկա-պէս Դպրեվանքին համար, երբ արդէն որոշում կայա-ցած էր նախապէս Դպրե-վանքի վերջնական օրէնք Անթիլիասի Մայրական-քէն Պիեթրայի խաղաղ միջավայրը փոխադրել: Բացման հանդիսաւոր պահուն, ժողովուրդային

առատաձեռն հանգան-կութեամբ կառուցուած այս նոր շէնքն էր միայն որ «Չարեհեան» կոչուե-լու երջանկայիշատակ Գարեգին Բ. Կաթողիկոսի կողմէ, ու ձեռնուեցաւ Ան-թիլիասի Դպրեվանքին առաջին շրջանաւարտը եղող անմահանուն Զարեհ Ա. Փայասլեան կաթողի-կոսին:

Այնուհետեւ մինչեւ օրս այս նոր շէնքը կը ծառայէ թեթ յարկերով, յատկա-պէս Դպրեվանքին համար, երբ արդէն որոշում կայա-ցած էր նախապէս Դպրե-վանքի վերջնական օրէնք Անթիլիասի Մայրական-քէն Պիեթրայի խաղաղ միջավայրը փոխադրել: Բացման հանդիսաւոր պահուն, ժողովուրդային

Շուրջ 20 տարիներ անցան այն օրէն, երբ Պիե-թրայի բարձունքին կա-ռուցուեցաւ նոր շէնք մը՝ թեթ յարկերով, յատկա-պէս Դպրեվանքին համար, երբ արդէն որոշում կայա-ցած էր նախապէս Դպրե-վանքի վերջնական օրէնք Անթիլիասի Մայրական-քէն Պիեթրայի խաղաղ միջավայրը փոխադրել: Բացման հանդիսաւոր պահուն, ժողովուրդային

նպաստը բերին, խորհրդակցաբար թեմական առաջնորդ արագանին եւ թեմի կրթական խորհուրդին: Իւրաքան-չիւր դասախօսութիւն ինքնին զորոյցի վերածուեցաւ, աշակերտներու հարցումներուն տրուած լուսաբանող պատասխաններուն ճամբով: Դասախօսութեանց ընթացքին արժարձեցան հայ եկեղեցւոյ, քրիստոնէական կրօնին, ընտանեկան սրբու-թեան ու քրիստոնէական դաստիարակութեան առըն-չուող նիւթեր: Թեմի կեանքին ներս ստեղծուած մեծ հետաքրքրու-թիւնը անգամ մը եւս եկաւ ցոյց տալու Մեծի Տանն կի-լիկիոյ կաթողիկոսութեան Մայրավանքին մեր թեմերէն ներս ծաւալած քրիստոնէական դաստիարակութեան աշխատանքին կարեւորութիւնը եւ մեծ նպաստը:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԹԵՂՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ ՄԷՉ

Մեծի Տանն Կիլիկիոյ վեհափառ հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Հայրապետական տնօրի-նութեով Կիլիկիան Ուիտի երկու միաբան հայրեր մեկ-նեցան Թեհրան, հրահանգով Թեհրանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Սեպուհ Ս. Եպս. Սարգիսեանի, զատկական տնօրնուն ընթացքին ու անոր յաջողող շա-րաթներուն քրիստոնէական դաստիարակութեան աշ-խատանքներ ծաւալելու:

Հոգշ. Տ. Մաշտոց վրդ. Չոպանեան եւ հոգշ. Տ. Գե-ղարդ Արք. Քրիստոնէական մեկնեցան Թեհրան եւ իրենց մասնակցութիւնը բերին Ս. Զատկուան եկեղեցական բոլոր արարողութիւններուն: Ապա Թեհրանի մէջ իրենց կեցութեան շրջանին, անոնք այցելեցին հայկական վար-ժարաններ ու կրօնական դաստիարակութեան իրենց

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԲՈՂՔԵՐ

Լիբանանեան կեանքի երեւոյթներ

ԼԻԲԱՆԱՆԻ ՓՈՂՈՑՆԵՐԸ ԽՃՈՂԱԾ ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐՈՒ ՊԱՍՏԱՌՆԵՐԸ՝ ԱՉՔ ԽՈՅՈՂ

Աչքը մարդուն սրտին հայելին է: Անոր ընդմէջէն կ'արտացոլայ անոր հոգեկան աշխարհը եւ անոր ճամբով սիրտը կը լեցուի գոհունակութեամբ, բնութեան առթած հաճոյքով, գեղարուեստական գործերուն ներշնչած զգացումներով եւ օրուան ընթացքին անոր հանդիպած պատկերներու, երեւոյթներու եւ զանազան տեսարաններու պատճառած լաւ կամ վատ պարտւումներով:

Ընդունուած երեւոյթ է, որ զիւրը՝ բնութեան գիրկը ապրող անձը աւելի հանդարտ, ժպտուն ու խաղաղասէր կ'ըլլայ: Կանաչը, բնութեան գոյնը ըլլալով, խաղաղութիւն, հանդարտութիւն եւ կենսունակութիւն կը ներշնչէ:

Քաղաքը ապրող անձերը ընդունուած են ըլլալու աւելի արագ ու գործնական: Անոնց շրջապատը, պայմանները եւ ընդհանուր մթնոլորտը զանոնք կը մղէ առանց յստակ կամ տուեալ պատճառի արագ քալելու, որեւէ բան ամբողջացնելու համար շնչասպառ վագելու եւ այդ մթնոլորտին մէջ ապրելու: Քաղաքին հսկայական շէնքերը, պատկառելի կառոյցները, իրարու մօտ շարուած հաստատութիւններուն եւ ընկերութիւններուն «ներհանդերձով» տեսքերը ինքնաբերաբար մարդիկը կը մղեն աւելի գործնական ըլլալու, ալ ու ձախ չնայելու, որովհետեւ աչքի հաճոյք պատճառող ոչինչ գոյութիւն ունի, այլ եղածները քարեղէն կառոյցներ են, որոնց մէկ անգամ նայիլ արդէն բաւարար կը նկատուի:



Բերուն վրայ նոյնիսկ, կը տողանցեն քով քովի կանգնեցուած պատառները, որոնք շատ յաճախ կը կրեն նոյն նկարները: Այս վերջինները իրենց դիրքով իրենք իրենց հակաքարոզութիւն կ'ընեն, որովհետեւ քաղաքացին փոխանակ քաջաբերութիւն եւ այդ արտադրութիւնը գնելու կը գարշի ու չ'ուզեր տեսնել զանոնք: Վերջինները, փաստօրէն, ճամբուն վրայ կը խանգարեն իրենց նայուածքն ու տրամադրութիւնը եւ շատ յաճախ ընկճուածութիւն կը պատճառեն արդէն գործէն յոգնած ու սպառած լիբանանցիներուն:

Նստիւնիկ ու թակաբոլուած, ընդհանրապէս լեզուական, ուղղագրական ու տրամաբանական սխալներով խճողուած այս ծանուցումներուն կը հանդիպինք անխորտիւր ամէն տեղ՝ շէնքերուն տանիքները, իրենց յատկացուած յատուկ տեղերը, շէնքերու պատերուն վրայ, ճամբերգրին, եւ...:

Գեղազիտական ճաշակէ գուրկ, շեշտուած ու խճողուած գոյներով ու ձեւերով, ծանուցուած նիւթին չարամարող նկարներով օժտուած այս պատատուները ուրախութեան ու գոհունակութեան փոխարէն նեղութիւն ու ճնշուածութիւն կը պատճառեն քաղաքացիին:

Տեսեսական եւ ընկերային քայ վատ պայմաններուն լոյսին տակ անոնք շատ յաճախ կը ծանուցեն «անսխալութեան առիթներու», «որեւէ բան միայն 1000 Լ. ոսկիի», «Մեր համեղ է ու յարմար», «Փորձէ եւ պիտի չզղջաս», եւ բազմաթիւ այլ գեղեցիկ մասին: Ասոնց կողքին տակաւին առկայ է քաղաքական, կրօնական, միութենական բնոյթ ունեցող պատատուներուն գոյութիւնը, որոնք փողոցն ու անոր պատերը կը վերածեն իրար հարուածելու եւ իրարու դէմ հակաքարոզութիւն ընելու, ուրիշին ծանուցումին վրայ իրենց ծանուցումը գետեղելու մրցակցութեան վայրի:

Քաղաքացին, ո'ր ալ երթայ, ո'ր ալ գտնուի, կը հալածուի ծանուցումներուն կողմէ, ո'ր կողմ ալ դառնայ ան կը հանդիպի անոնց, որոնք կը լեցնեն ու կը խճողեն իր միտքը, հոգին ու աչքը:

Լիբանանցիին աչքը ա'լ գուրկ է գեղեցկութեան տեսողութեանն էլ եւ անկազմ գրեթէ ոչ մէկ գեղեցիկ պատկեր կը նկատէ մարաքաղաքին մէջ: Ուսումնասիրութիւններն ու վիճակագրութիւնները ցոյց տուած են, թէ



քիչ չեն այն արկածները, որոնց պատճառը այս ծանուցումներն են: Ծանուցում կարդալու համար յանկարծ կանգ առած ինքնաշարժ մը անպայման պատճառ պիտի ըլլայ կամ խճողումի եւ կամ արկածներու:

խճողումը այսօր կը շրջապատէ լիբանանցիին՝ ամէն տեղ, փողոցը, շէնքերուն մէջ, մայրուղիներուն վրայ, տունը եւ այլն: Բնակչութեան թիւի բարձրացումին, ներքին տեղաշարժին ու այլ երկիրներէ Լիբանան եկած անձերու պատճառով քաղաքները սկսած են նեղ գալ լիբանանցիին համար ու ան խճողուած ու ճնշուած կը զգայ ամէն տեղ ու ամէն տեղ:

Ասոնց շարքին հիմնական տեղ կը զբաղէ ծանուցումներու այս ցանցը, որ կ'անշարժացնէ քաղաքացիին ուղեղը եւ տրամաբանութիւնը, կը կաշկանդէ անոր ազատ ընտրութիւնը եւ կը ճնշէ անոր վրայ:

Քաղաքացին պահ մը կը շուտաւրեւ եւ հարց կու տայ, թէ ինչ կը պատահի իր շուրջ, ան շուտաւրեւ նեղութիւն կը զգայ եւ կ'ուզէ դուրս գալ այս բոլորէն, ազատօրէն նայիլ, շնչել ու ընտրել:

Սակայն, ծանուցումներու զանգուածը օրէ օր աճ կ'արձանագրէ եւ քաղաքացին երբեք առիթ չ'ունենար իր երազած մաքուր օդը շնչելու եւ լայն հորիզոններէ նայելու աշխարհին:

Պատրաստեց
ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ

ՄՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ

Առողջ Մնայու Գաղտնիքները

ՆԱԽԱՃԱՇԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Նախաճաշը անհրաժեշտ է, որովհետեւ գիշերուան տասը - տասներկու ժամուան «ծոմապահութիւնը» կը դադրեցնէ եւ մարմինն կու տայ ուժականութիւն, որ անհրաժեշտ է առաւօտեան մնացեալ ժամերուն համար: Նախաճաշին պակասը եւ կամ նախաճաշ չընելը պատճառ կը դառնայ արեան շաքարի համեմատութեան նուազեցման, որ իր կարգին կը պատճառէ գլխացաւ, ֆիզիքական տկարութիւն, յոգնութիւն, անօթութիւն եւ ջրաշնչութիւն: Ծայրագոյն պարագային կրնայ նաեւ պատճառ դառնալ սրտի զարկերու արագացման եւ սեսողութեան հարցեր յառաջացնել: Ըստ կարգ մը ուսումնասիրութիւններու նախաճաշ չընելը պատճառ կը դառնայ արեան քրոմոսթերոլի բարձրացման, որ, բարձր կը շարունակէ մնալ ամբողջ օրուան ընթացքին:

Հիմնական ուտելիքն է հաւկիթը: Արարական երկիրները ընդհանրապէս կը կեդրոնանան մածուին, պանիրի տեսակներուն եւ ձիթապտուղին վրայ: Կ'ուտեն նաեւ անուշ եւ մեղր: Եթէ օրը պիտի սկսինք շատ եւնթով պարունակող աշխատանքով մը, կրնանք ուտել մէկէ մինչ, քննֆէ պիտի լինի եւ կամ քրուասան, ինչպէս նաեւ՝ հում միս, որ հարուստ է քրոմոսթերոլով: Պէտք է գիտնանք, որ այս տեսակի նախաճաշերը հարուստ կ'ըլլան ջերմութիւնով: Անոնք կը պարունակեն 300էն 700 քալորի: Պէտք է երկմըտինք սպառելու վերջին տեսակները, որովհետեւ թեթեւ ուտելիքները մեզի անօթի կը պահեն յարողող առաւօտեան ժամերը:

մը տեսակներով, ձէթով եւ լեմոնով պատրաստուած, հարուստ է բնաթեթեթով բուսական փրօթէինով եւ նոյնիսկ նշալով:

Նոր սերունդը նախընտրութիւն կու տայ պիստակի կարագին՝ փիւնաք պաթըր, որ նաեւ անհրաժեշտ է եթէ ատենը անգամ մը սպառուի:

Միսի տեսակները՝ Ինչ կը վերաբերի միսի տեսակներուն, կարելի է ուտել հնդկահաւի կամ հաւի մորթատէլ:

Բացառելով Ենթ կարելի է ուտել քիչ մը անանուխ, վարունգ կամ լոլիկ:

Պտուղը՝ Անհրաժեշտ է պտուղի տեսակ մը ուտել եւ կամ զաւաթ մը պտուղի հիւթ խմել առաւօտեան: Կարելի է նաեւ չոր պտուղ ուտել կաթին եւ քորնֆլէյթսին հետ:

ՆԱԽԱՃԱՇԻ ՆՍՏԵԼԻՔՆԵՐԸ

Նշալով ուտելիքները՝ Կակուղ հացը, չոր հացը, թուխ գոյնի հացը եւ քորնֆլէյթսը անհրաժեշտ միջին կէտք:

Կաթը եւ կաթնեղէնները՝ Պէտք է օրը սկսինք խմելով զաւաթ մը կաթ եւ կամ մածուն: Կարելի է նաեւ քիչ ճարպ պարունակող կաթ խմել, եթէ չենք ուզեր աւելորդ քալորի ստանալ: Կրնանք նաեւ սոյա կաթ խմել եւ ուտել պանիրի տեսակներ:

Փրօքի ինքը՝ Շարաթը մէկ կամ երկու հաւկիթ ուտելը անհրաժեշտ է երիտասարդին համար: Իսկ բակլան՝ Փուրը, որ արարական երկիրներու աւանդական ուտելիքներէն կը նկատուի՝ հացով, կանաչեղէնի կարգ

Ջուրը՝ մարմինը հակառակորէն համար

Առաւօտեան նախքան որեւէ բան ուտելը երկու զաւաթ ջուր պէտք է խմել մարմինը մաքրելու համար: Իսկ ինչ կը վերաբերի սուրճին եւ թէյին, կարելի է խմել առաւօտեան, որովհետեւ կաթին մէջ գտնուող քալորներն ու ծախսութիւնը կը տկարացնէ:

Պէտք է վարժուինք սննդական առողջ սովորութիւններու, որպէսզի վարժեցնենք մարտադրական գործարանները «անօթութեան զգացողութեան» եւ ուտելիքի սպառման, միշտ հաւասարակուած ձեւով:

ՔԱՐԱ ԵԱՐՏԵՄԵԱՆ

ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ» մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ արտադրելու փափաքողներէն կը խնդրուի թանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնակաթողութի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ» ծանուցումներու գրասենեակը:

Շ. Յ. Գ. ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐՈՎ ՄԱՐՍԻՆ

Շ. Յ. Գ. ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐՈՎ ՄԱՐՍԻՆ

Կը բանախօսէ՝ **ԸՆԿ. ԵՄԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ**

•Գեղարուեստական յայտագիր

Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 8 Մայիս 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» բաւտերապահին մէջ:

ԸՆԿԻԵՐ

ԾԱՆՈՅ. Ձեռնարկին կը կանխէ պատանեկան միութիւններու կողմէ պատրաստուած պատի թերթերու ցուցադրութիւնը:

ՀԱՄԱՉԳԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՃԱՐԿԱՆ ՃԱՐՆՈՒՐ

ԾՆՆԴԵԱՆ 100ԱՄԵԱԿ

Կը բանախօսենք **ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ**

Եւ **ԳՐԻԳՈՐ ՃԱՐՆԵԱՆ**

•Գեղարուեստական յայտագիր

Տեղի կ'ունենայ Կիրակի, 11 Մայիս 2003, առաւօտեան ժամը 11:30ին, «Յ. Տեր Մելքոնեան» բաւտերապահին մէջ:

ԸՆԿԻԵՐ



Գործնական եւ առեւտրական նպատակներով, քաղաքին մէջ կանաչ տարածութիւններն ու պարտէզները իրենց տեղը կը գիշեր քարերուն, անշունչ մայրուղիներուն եւ հսկայական հաստատութիւններուն, որոնք գործնական գետնի վրայ օգտակարութիւններ ունենալով հանդերձ, կը նուազեցնեն քաղաքին թթուածինը, կը խճողեն գաշն եւ աւելի եւս կը հեռացնեն բնութենէն:

Նոյնիսկ ծովը այսօր սկսած է փոխարինուիլ շէնքերով ու ճամբաներով: Մարդիկ ծայրայեղօրէն գործնական մօտեցումներով, առանց լաւապէս ուսումնասիրելու կը կառուցեն ու կը շինեն մինչեւ որ քաղաքը վերածուի շաղախի ամբողջութեան մը: Կանաչը բնականաբար կը վերածուի կուպրի գոյնի, ծառերը՝ շաղախներու, պարտէզները՝ կառատներու եւ պուրակները՝ մայրուղիներու:

Սակայն հակառակ այս քարաշէն կառոյցներու գոյութեան, քաղաքապետութիւններ եւ զանազան կազմակերպութիւններ աշխատանք կը տանին քաղաքը բարեզարդելու, ծառեր ցանելու, մեր շրջապատը գեղեցկացնելու:

Ինչպէս ամէն բան կեանքի մէջ, քաղաքի պատկերը եւս հոն գտնուող ամբողջութեան ներդաշնակութիւնն է, որ երբեմն բաւական լաւ եւ երբեմն խճողուած ու արեւուն տակ իսկ մութ կը թուի ըլլալ:


Լիբանանեան քաղաքներուն մէջ ընդհանրապէս եւ Պէյրութի մէջ յատկապէս այս քարաշէն կառոյցներուն եւ անշարժ կոյտներուն կողքին տիրական ներկայութիւն են ալ ու ձախ «ցանուած» ու տարածուած ծանուցումներու պատատուները, որոնք քաղաքը կը խճողեն ու շնչահեղձ կ'ընեն...:

Պէյրութը այսօր կը լողայ շարժուն, շրջուն ու հաստատ ծանուցումներու ծովու մը մէջ. որեւէ պարագայ պատ, բացութիւն, շէնքի ու գործատեղիի մուտք, պատ կամ դուռ անպակաս չեն մնար ծանուցումներէ, հրաւերներէ, կոչներէ, մահազոյներէ եւ այլ իմաստալից ու անիմաստ պատատուներէ ու թղթիկներէ:

Վերջերս լայն տարածում գտած են նաեւ շրջուն ինքնաշարժներու միջոցով կատարուող ծանուցումները, իրենց յարմար ու անյարմար վայրերուն մէջ բուսած պատատուները եւ այլն: Հաստատութիւններու բեռնատարներ, պարզ ինքնաշարժներ եւ այս կամ այն ընկերութեան պատկանող փոխադրամիջոցները եւս «գարդարուած են» իրենց ընկերութեան արտադրութեան նկարներով, զանոնք սպառելու կոչներով: Նման ծանուցումներ կը կրեն նաեւ մարդատար ինքնաշարժները: Պէյրութի փողոցներուն մէջ ինքնաշարժ վարողին դիմաց յանկարծ կը յայտնուի գունաւոր ինքնաշարժ մը՝ այս կամ այն արտադրութեան ծանուցումը ցուցադրող, ինքնաշարժ մը՝ հաստատութեան մը գովազդը կատարող եւ ինքնաշարժներ, որոնք շարժուն ծանուցումներ կրելու համար յատկացուած են միայն:

Նեղ ու խճողուած փողոցներուն աջն ու ձախը գետեղուած պատատուներէն եւ թուղթերէն բացի, մայրուղիին վրայ, ուր հայեացքը աւելի լայն տարածութեան կը կարծիք, ծանուցումները գրաւած են վարիչին նայուածքին գրեթէ ամբողջ հաստատութիւնը:

Մայրուղիին երկու կողմերը, պարտէզներուն եւ ծա-



Կնոջական

ՓՈՐՁ - ԸՆԴՅԱՐԱՆ

ԿԵԱՆՔԻ ՄԷՉ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՍԻՐՈՂ ՄԸՆ ԷՔ

1

Ձեր տարեդարձին առիթով վարսալարդարի կտրոն մը նուէր կը ստանաք:

Ա.- Հազիւ նշմարելի «բուս» մը կը կտրէք:

Բ.- Կը բաւարարուիք «պրաշնկոյով» մը:

Գ.- Թէ՛ ձեր մազին գոյնը եւ թէ՛ սանտրուածքը կը փոխէք:

2

Հազիւ տարի մը անցած է նոր տուն փոխադրուածեան եւ ձեր կողակիցը կ'առաջարկէ աւելի «հասնելի» թաղ մը փոխադրուելի:

Ա.- Կը մերժէք:

Բ.- Անմիջապէս կը խանդավառուիք եւ կ'ընդունիք:

Գ.- Մտածելու առիթ կ'ուզէք:

3

Ձեր վարսալարդարը ուրիշ թաղամաս կը փոխադրուի:

Ա.- Անտարբեր կը մնաք:

Բ.- Քիչ մը կ'ափսոսաք:

Գ.- Շատ կը նեղուիք, հազիւ վարժուեալ էիք անոր...

4

Ի՞նչ են առհասարակ ձեր երեկոյան ծրագրերը:

Ա.- Առհասարակ միօրինակ:

Բ.- Ոչ մէկ ծրագիր:

Գ.- Թատրոն, ճաշարան, շարժապատկեր... ծրագրերը շատ են:

5

Եթէ գեղեցկագիտական գործողութեան մը պիտի ենթարկուիք, նախապատուութիւնը կուտաք:

Ա.- Ձեր քիթին:

Բ.- Ձեր շրթերուն:

Գ.- Մորթին:

6

Ի՞նչ յաճախականութեամբ կը փոխէք ձեր հիւրասենեակի կահոյքը:

Ա.- Երկու տարին անգամ մը:

Բ.- Հինգ տարին անգամ մը:

Գ.- Ինչո՞ւ փոխել, երբ տակաւին լաւ վիճակի մէջ է:

7

Եթէ ձեր գործատէրը ձեզի երկրէն դուրս զրկէ առաքելութեամբ մը:

Ա.- Մտածելու ժամանակ կը խնդրէք:

Բ.- Ձեր մեծագոյն երազը կ'իրականանայ:

Գ.- Կը տատամսիք, մտածելով, որ արդեօք պիտի կարենա՞ք յաջողիլ:

8

Եթէ կեանքի պայմանները պահանջեն, որ ձեր ապրած երկիրը ձեզի եւ հեռուոր երկիր մը հաստատուիք ու ապրիք:

Ա.- Ակամայ կ'ենթարկուիք:

Բ.- Լաց ու կոծով կ'ենթարկուիք:

Գ.- Կը հրճուիք:



մտածելով, որ նոր հորիզոններ պիտի բացուին ձեր առջեւ:

Ա.- Անտարբեր կը մնաք:

Բ.- Քիչ մը կ'ափսոսաք:

Գ.- Շատ կը նեղուիք, հազիւ վարժուեալ էիք անոր...

Ի՞նչ են առհասարակ ձեր երեկոյան ծրագրերը:

Ա.- Առհասարակ միօրինակ:

Բ.- Ոչ մէկ ծրագիր:

Գ.- Թատրոն, ճաշարան, շարժապատկեր... ծրագրերը շատ են:

Եթէ գեղեցկագիտական գործողութեան մը պիտի ենթարկուիք, նախապատուութիւնը կուտաք:

Ա.- Ձեր քիթին:

Բ.- Ձեր շրթերուն:

Գ.- Մորթին:

Ի՞նչ յաճախականութեամբ կը փոխէք ձեր հիւրասենեակի կահոյքը:

Ա.- Երկու տարին անգամ մը:

Բ.- Հինգ տարին անգամ մը:

Գ.- Ինչո՞ւ փոխել, երբ տակաւին լաւ վիճակի մէջ է:

Եթէ ձեր գործատէրը ձեզի երկրէն դուրս զրկէ առաքելութեամբ մը:

Ա.- Մտածելու ժամանակ կը խնդրէք:

Բ.- Ձեր մեծագոյն երազը կ'իրականանայ:

Գ.- Կը տատամսիք, մտածելով, որ արդեօք պիտի կարենա՞ք յաջողիլ:

Եթէ կեանքի պայմանները պահանջեն, որ ձեր ապրած երկիրը ձեզի եւ հեռուոր երկիր մը հաստատուիք ու ապրիք:

Ա.- Ակամայ կ'ենթարկուիք:

Բ.- Լաց ու կոծով կ'ենթարկուիք:

Գ.- Կը հրճուիք:



ՄԵՐ ԶԱԻԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՆԸ

ՄԵՐ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ-ՊԱՐՄԱՆՈՒՅԻՆԵՐՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ձեր 15-16 տարեկան զաւակը յաճախ պիտի փափաքի ընկերներուն հետ թատրոն կամ հաւաքովի երթալ: Ասիկա բնական երեւոյթ է, այս ձեւով ան կը փափաքի իր անկախութիւնը եւ հասունութիւնը հաստատել:

Խոհեմութիւնը կը պահանջէ, որ տեւաբար չմերժէք եւ առիթներով՝ արտօնէք, հեռուէ հեռու հսկելով եւ խրատելով:

- Եթէ ձեր զաւակը ընկերով տունը հաւաքովի հրաւիրուած է, դուք ճշգրտեցէք անոր վերադարձի ժամը: Այդ ժամը թող ըլլայ տրամաբանական, ոչ շատ կանուխ, որպէսզի ընկերներուն մօտ գէշ չզգայ:

- Եթէ ձեր զաւակը ընկերներով շարժապատկերի սրահ պիտի երթայ, նախօրէք հետաքրքրուեցէք ֆիլմին նիւթին մասին:

- Եթէ ձեր զաւակը տունը հրաւիրէ իր ընկերները, հիւրընկալեցէք զանոնք, բայց պայման դրէք, որ սենեակը կոկոն մեկնելէ առաջ:

- Առանց քարոզի բնոյթ տալու, ձեր զաւակին ուշադրութեան յանձնեցէք ծխախոտի, թմրեցուցիչի, ինքնաշարժ արագ վարելու, խմիչքի, օտարականի հետ յարաբերուելու վտանգները:

- Կտրուկ մերժումները լուծուած չեն, խօսեցէք, համոզեցէք եւ վստահութիւն ներշնչեցէք ձեր զաւակներուն, որպէսզի ձեզմէ գաղտնի քայլեր չառնեն:

- Ձեր զաւակին որոշ անկախութիւն մը շնորհելով, կ'օգնէք որ ան ինքնավստահ եւ պատասխանատու զգայ, ընկերային բնական կապեր հաստատէ, այլ խօսքով մեծնայ:

ԵՐԵՒԱՅԻՆ ՀԱՆԳԻՍՏ ՔՈՒՆԸ

Յաճախ կը պատահի, որ ձեր երեխան գիշերը արթննայ եւ անդադար լայ, իսկ դուք պատճառը չգիտնալով շուրթիք ու տագնապիք:

Անօթութիւնը կամ հիւսնադութիւնը յաճախ անոր լացին պատճառները չեն, ուրեմն եկէք փորձեցէք հետեւեալ հնարները, որոնցմէ մէկն ու մէկը թերեւս հանգրտացնէ զինք:

- Անոր փորին վրայ տաքուկ անձեռոց մը դրէք:

- Անոր կուսակը շփեցէք ուղղահայեաց շարժումներով:

- Անոր յետոյքին թեթեւ հարուածներ տուէք:

Այս դիւրին միջոցները յաճախ կ'օգնեն, որ ան հանդարտի եւ կրկին քունի անցնի:



Աւելի մեծերուն պարագային (3 - 4 տարեկան), միթողաւորէք, որ ձեր զաւակը նստասենեակը, պատկերասփիւռին առջեւ քունի անցնի: Ոչ ալ արտօնեցէք, որ ան ձեր մահճակալին մէջ քնանայ, այլ պէտք այս մէկը սովորութեան պիտի վերածուի եւ իր անպատեհութիւնները պիտի ունենայ:

Քունէն արթննող երեխային մի՛ արտօնէք որ նստասենեակ գայ, ու ձեզի հետ ժամանակ անցընէ:

Մի՛ պոռաք եւ մի՛ յանդիմանէք արթննող երեխան-գայն աւելի չզրգուելու համար: Անոր սենեակին մէջ թեթեւ լոյս մի՛ պոռաք պահեցէք, մեղմ երաժշտութիւն մը բացէք, իր սիրած մէկ «փրլիչ»ը հետը քնացուցէք եւ անգիջող, բայց ազնիւ վարուեցէք անոր հետ:

«ՀԱՅ ԳԻՐՔԸ ՏՈՒՆՆ Է ՀԱՅՈՒՆ»

ՇՐՋՈՒՆ ՅՈՒՅԱՇԱՆԴԵՍ ԱՆՀԱՒԱՏԱԼԻ ՉԵՂՉ ՎԱՃԱՌՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

1.- **ԼԵՈՆ ԵՒ ՍՈՅԻՍ ՅՈՎՈՐԵԱՆ**
ԱՁԳԱՅԻՆ ՔՈՒՆԸ
Երկուշաբթի 5ԵՆ Ուրբաթ 9 Մայիս
Առաւօտեան ժամը 10:00ԵՆ
Երեկոյեան ժամը 8:00

2.- **Հ.Բ.Մ. ԴԱՐՈՒՅԻ - ՅՈՎԱԿԻՄԵԱՆ**
ԵՐԿՐԴ ՎԱՐՄԱՐԱՆ
Երկուշաբթի 12ԵՆ Ուրբաթ 16 Մայիս
Առաւօտեան ժամը 10:00ԵՆ
Երեկոյեան ժամը 5:00

3.- **ԱՁԳԱՅԻՆ ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈՒՆԸ**
Երեքշաբթի 19ԵՆ Ուրբաթ 23 Մայիս
Առաւօտեան ժամը 10:00ԵՆ
Երեկոյեան ժամը 7:00

ԵԱՆՕԹ.- Սեծաբանակ եւ փոքրաբանակ գնումի կարելիութիւն:

ԴԷՄՔԻ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ



Երբ մեր դէմքին վրայ առաջին անգամ ըլլալով կնճիռներ նկատենք, պէտք չունինք անմիջապէս դիմելու գեղեցկագիտական սերբերու, որոնք յաճախ շատ սուղ եւ հազուադէպօրէն ազդու արտադրութիւններ են:

Դէմքի որոշ մարզանքներ, ծամածուրութիւններ եւ մարձումներ կրնան օգնել սրբազրելու որոշ կնճիռներ եւ արգիլելու նորերու յայտնաբերումը:

Ստորեւ նկարին վրայ կը տեսնենք... ապուրի զգալով կատարուող մարձումներ, որոնցմէ առաջինը կը պրկէ վիզին մորթը, երկրորդը՝ դէմքին շուրջի մկանները, իսկ երրորդը կ'անհետացնէ կնճիռները:


Ա.- Դեմքը գետեղել վիզին երկու կողմերը՝ այտերուն զուգահեռ, ապա քիչ մը ճնշել ու կամաց-կամաց դեմքը դէպի ահալան շարժել: (Կրկնել 2 անգամ):

Բ.- Չոր դեղանքով թեթեւ հարուածներ տալ վիզին վերի մասին, դէմքին շուրջը գտնուող բաժինին, սկսելով կեղծունէն (կզակին տակէն) եւ շարունակելով դէպի ահալանները: (Կրկնել 2 անգամ):

Գ.- Բերնով «Օ» տառը հնչել, դեմքը գետեղել բերնին երկու ծայրերուն եւ շրջանակներ գծել նախ ժամացոյցին սլաքներուն, ապա՝ հակառակ ուղղութեամբ: (Շարժումը կատարել 3 վայրկեան):

ԽՈՒՍԱԳԻՐ

ՀՆԴԿԱՀԱԻ ԽՈՐՈՎԱԾ





Բաղադրութիւն՝ 4 անձի համար.-
400 կրամ հնդկահաւի կամ հաւու «Փիլէ»
3 հատ թարմ կանաչ պղպեղ
4 ապուրի դգալ ձիթաւի
2 կիտրոն
Պճեղ մը սխտոր
Թարմ ծոթրին
Դափնի երկու տերեւ
Աղ, սեւ պղպեղ

Պատրաստութիւն.-
Խորունկ ամանի մը մէջ խառնել ձէթը, աղն ու պղպեղը, ծոթրինը, դափնի տերեւը, ճգմուած սխտորը եւ կիտրոնի հիւթը:
Հնդկահաւի կտորները խորանարդաձեւ կտրտել եւ այդ թացանին մէջ երկու ժամ պահել:
Պղպեղները երկար կտրտել եւ խորանարդաձեւ միսերուն շուրջ փաթեթելով շամփուրի մը վրայ անցընել եւ խորովել:
Հրամցնել տաք:
Այս պարզ եւ առողջապահական խորովածը թելադրելի է յատկապէս սննդականոնի հետեւողներուն:

Պատրաստե՛ք՝ ՇՈՒՇԻԿ ՍԱԻՍԱԳԱԼԵԱՆ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Կ



ԱՊՐԻՔ, ՏՂԱՔ

(Հ.Մ.Ը.Մ. - ԱՅՏ ՄՐՅՈՒՄԻՆ ԱՌԻԹՈՎ)

Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի խումբը երեկ կեսօրեկ էսք Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ 2-2 հաւասարութիւն մը արձանագրեց Ահտի հետ, Լիբանանի բաժակի մրցաշարին քառորդ աւարտականի մրցումին:

Նախքան մրցումին մանրամասնութեանց անցնելը, կ'արժէ հոգեկան լայն գոհունակութեամբ եւ ամենայն արդարութեամբ «պրիք» ըսել մեր խումբին, որովհետեւ ան երեկ փաստեց, թէ ինք ոչ միայն հաւասարեց - հաւասար, այլեւ շատ աւելի լաւ ֆուտբոլ կը կիրարկէ, քան Ա. դասակարգի ախոյեանութեան պարագլուխի դիրքը գրաւող (որ միայն շարքավերջին իր տեղը մէկ կէտով վիջեցաւ Օլիմփիքի) խումբը՝ Ահտը: Մրցումին նախօրեակին կար այն մտավախութիւնը, թէ արդեօ՞ք Հ.Մ.Ը.Մ. պիտի կարենայ հարցը գլուխ հանել, տրուած ըլլալով, որ ան Բ. դասակարգի խումբ էր, նոյնիսկ եթէ հոն լաւագոյնն էր: Փաստօրէն իր մաս ալ կասկածն ալ փարատած է եւ Հ.Մ.Ը.Մ. ամենայն ինքնավերստահութեամբ իր քայլերը կը նետէ Ա. դասակարգին մէջ: Անշուշտ աւիկա չի նշանակեր, թէ ամէն բան կարգին է: Տակաւին տարբեր տեսակի դասաւորումներու, նոր մարզիկներու կարիք կայ, որոնք անկասկած նկատի առնուած են պատասխանատու մարմիններուն կողմէ, բայց կարելորդ խումբին կորիզը կայ, ինչ որ կենսական է այս պարագային:

Ինչ կը վերաբերի երեկուան մրցումին մակարդակին, ապա անվարան կարելի է հաստատել, որ Հ.Մ.Ը.Մ. շատ աւելի լաւ խաղաց, քան մրցակիցը:

Մրցումին առաջին քսան վայրկեաններուն թէեւ մեր տղոց մօտ զգալի էր որոշ պրկուածութիւն եւ զգուշտորութիւն, սակայն այնուհետեւ 25 վայրկեան մինչեւ կիսախաղ, իսկ երկրորդ կիսախաղը ամբողջութեամբ Հ.Մ.Ը.Մ. ինք եղաւ դաշտին տիրոջ, ինք եղաւ տիրապետողը: Եւ չմոռնալ, որ Հ.Մ.Ը.Մ. կը մրցէր միայն մէկ օտարականով, մինչ Ահտ՝ երկու:

Ասոնք զգացական տողեր չեն, այլ՝ իրականութիւններ, լրիւ առարկայական ձեւով դիտուած: Խօսինք տուեալներով: Բացի երկու կոլերէն, Ահտ երկու անգամ վտանգեց Հ.Մ.Ը.Մ.ի բերդը, մինչդէռ Հ.Մ.Ը.Մ. վեց անգամ, անկախ կոլերէն: Իսկ ինչ կը վերաբերի կոլերուն, մրցակից կապմին պարագային անոնք երկուքն ալ զեղծուած էին. առաջինը՝ ձեռքի յտակ միջամտութեամբ, երկրորդը՝ «կորսուած» ժամանակի իմաստով իրաւարարին նուիրատուութեամբ: Իսկ Հ.Մ.Ը.Մ.ի կոլերը երկուքն ալ սքանչելի էին պարզապէս: Առաջինը՝ Վարդան Ղազարեանի ազատ հարուածին վրայ (որ ի դէպ փենայթի էր, բայց...), երկրորդը՝ Թոմասի ռմբային հարուածով (գեղեցիկ մէկ - երկուէ մը ետք): Երկու կոլերուն ալ բերդապահ Պիլալ Հաշեմի կը մնար միայն դիտել...

Այս բոլորէն ետք, սակայն, ընդգծելի կը մնայ այն, որ յայտնապէս յառաջիկայ եղանակին բաւական «քաջելիք ունինք»: Այլ խօսքով, երեկ թէ՛ մեր մարզիկները, թէ՛ պատասխանատուները, թէ՛ համակիրները վերջիջեցին իբրանանեան ֆուտբոլի երբեմնի դժիւմ օրերը, երբ դաշտին վրայ մրցումին ձակատագիրը իրաւարարները կ'որոշէին, եւ ոչ թէ խումբերը...

Արդարեւ, Թալէպ Ռամատան երեկ անգամ մը եւս յիշեցուց, թէ ֆուտբոլը իր օրէնքները ունի թէեւ, բայց մեր երկրին մէջ այդ ալ կարելի է փոխել: Այլապէս ի՞նչ պէտք բացատրել, որ 5 վայրկեան տրուած երկարաձգումը, որ ինքնին անարդար էր ու անտեղի, ինք վայրկեանի հասնի, մինչեւ որ մրցակիցը նշանակէ հաւասարութեան կոլը: Տակաւին չխօսինք մրցումին ընթացքին տարօրինակ ու անհիմն սուլիչներուն մասին, որոնց հաւանաբար այլեւս պէտք է վարժուիլ...

Յամենայնդէպս, վերադառնալով երեկուան բո՛ւն իրադարձութեան, անգամ մը եւս կը շնորհաւորենք մեր խումբը, իր պատասխանատուներով, մարզիչներով թէ մարզիկներով, որոնք Հ.Մ.Ը.Մ.ի վարկը բարձր պահեցին եւ յուշեցին բոլորին, թէ Հ.Մ.Ը.Մ. կը վերադառնայ հաստատ, խրոխտ ու վճռական քայլերով, հետեւաբար պատրաստուեցէք անոր հաջիւր ընել, կամայ թէ ակախի:

Հ. Վ.

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱՇԱՐԲ

Հ. Մ. Ը. Մ. - ԱՇՏ՝ 2-2

Լիբանանի ֆուտբոլի բաժակի մրցաշարի քառորդ աւարտականի երթի մրցումներուն, որոնք տեղի ունեցան երեկ, Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ 2-2 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Ահտի հետ:

Ա. դասակարգի ախոյեանութեան ընդհանուր դասաւորման 2րդ դիրքը գրաւող Ահտ, մրցումին 17րդ վայրկեանին բացաւ հաշիւը, շնորհիւ՝ Պասէմ Պարպարի:

Ա. կիսախաղին 1-0 արդիւնքով պարտուած Հ.Մ.Ը.Մ., Բ. կիսախաղին յաջողեցաւ նշանակել երկու կոլ, շնորհիւ՝ Վարդան Ղազարեանի եւ Թոմաս Պիրքի:

Մրցումին իրաւարար՝ Թալէպ Ռամատան բնաւ չարդարացուց իր կոշտը եւ իր կողմնակալ սուլիչներով մթնոլորտը խանգարեց:

Մրցումին 98րդ վայրկեանին, Ահտ նշանակեց իր հաւասարութեան կոլը, շնորհիւ՝ Մահմուտ Շահիուտի:

Պէյրուքի Քաղաքապետարանի դաշտին վրայ տեղի ունեցած Անսար - Օլիմփիք մրցումը վերջ գտաւ 1-1 արդիւնքով, մինչ Մարպական Աւանի դաշտին վրայ՝ Նըմէի եւ Թատամոն Սուրի միջեւ ձակատուով վերջ գտաւ Պէյրուքի կապմին յաղթանակով՝ 3-2:

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԺՈՂՈՎ

Շաբաթակից բնի, իր գումարած հերթական ժողովին, Լիբանանի ֆուտբոլի ֆեդերատիոնը քննարկեց 2003-2004 մրցաշարի կազմակերպման հարցերը:

ՓԻՆԿ ՓՈՆԿ

Հ.Մ.Ը.Մ.ի ԱՂԶԻԿՆԵՐԸ Կ'ԱՐՁԱՆԱԳՐԵՆ ՓԱՅԼՈՒՆ ԱՐԴԻՆԵՐԵՐ

Լիբանանի փինկ փոնկի աղջկանց խմբային ախոյեանութեան մրցաշարին, որ տեղի կ'ունենայ Մոն Լա Սալի մէջ, Երեքշաբթի օր Հ.Մ.Ը.Մ. Պէյրուքի կապմը արձանագրեց երկու յաղթանակ, յաջորդաբար պարտութեան մատնելով Մարիսթը եւ Ռիատին, երկուքն ալ 3-0 արդիւնքով:

Իր նախորդ երեք մրցումներուն նոյն արդիւնքով երեք յաղթանակ արձանագրած Հ.Մ.Ը.Մ. այժմ միայն մէկ մրցում ունի կատարելիք, այդ ալ Ատապ Ռուալ Ռիատայի դէմ, զայ շաբաթ:

● ԼԻԲԱՆԱՆԻ տղոց խմբային ախոյեանութեան մրցաշարին, Հ.Մ.Ը.Մ. Պէյրուք այսօր Մոն Լա Սալի մէջ ժամը 5:30ին իր վերջին մրցումը կը կատարէ, Մասնի Մայի մէջ դէմ: Ինչ ալ ըլլալ մրցումին արդիւնքը, Հ.Մ.Ը.Մ. պիտի մնայ երրորդ դիրքին վրայ:



Վարդան Ղազարեանի հարուածը, որ...

անի ֆուտբոլի ֆետերատիոնը հրապարակեց բաժակի մրցաշարին քառորդ աւարտականի դարձի մրցումներուն օգոստոսին:



... մուտք կը գործէ Պիլալ Հաշեմի բերդէն Գերս

նեւ, ինչպէս նաեւ տեղի ունեցած Լիբանանի ֆուտբոլի բաժակի մրցաշարին քառորդ աւարտականի մրցումներուն յայտագիրը (տեսնել՝ ստորեւ):



Հ.Մ.Ը.Մ.ի համակիրները՝ միջտ Գերկայ (Լուսակարները՝ ՍԵՒՏԻՏՈ ՖՈՒՅՈ ՏԻԳՐԱՆ ՊԵՐՊԵՐԵՆԻ)

որոշումով, Լիբանանի ֆուտբոլի ֆեդերատիոնը քննարկեց 2003-2004 մրցաշարի կազմակերպման հարցերը:

ԶՈՐԵՔՆԱՐԹԻ, 14 ՄԱՅԻՍ	ԺՄՄ	ՂԱՇՏ
Ահտ - Հ.Մ.Ը.Մ.	4:30ից	Մ. Աւան
Թատամոն Սուր - Նըմէ	4:30ից	Սուր
Օլիմփիք - Անսար	8:30ից	Պէյրուք

ՀԻՆԳՇԱՐԹԻ, 15 ՄԱՅԻՍ	ԺՄՄ	Սուր
Իպլահ - Սալամ	4:30ից	Սուր

ՍՈՐԵՒ՝ Ա. դասակարգի ախոյեանութեան 19րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:	ԺՄՄ	ՂԱՇՏ
ՇԱԲԱԹ, 10 ՄԱՅԻՍ	ԺՄՄ	ՂԱՇՏ
Թատամոն Սուր - Սաժես	4:45ից	Սուր
Ահտ - Անսար	4:45ից	Մ. Աւան
Օլիմփիք - Նըմէ	8:30ից	Պէյրուք
ԿԻՐԱԿԻ, 11 ՄԱՅԻՍ	ԺՄՄ	Սուր
Շապապ Սահէլ - Սապարրա	4:45ից	Փունիէ
Պըրժ - Սալամ	4:45ից	Պէյրուք
Ախա Ալէյ - Սաֆա	4:45ից	Մ. Աւան

«ՉԵՍՓԻՆԵԶ ԼԻԿ»

- Ա. ՍԵ. ՄԻԼԱՆ - ԻՆԹԵՐ ՄԻԼԱՆ՝ 0-0
- ՌԵՍԼ ՍԱՏՐԻՏ - ԵՈՒՎԵՆԹՈՒՄ՝ 2-1

«Չէսփինչ Լիկ»ի կիսաւարտականի երթի մրցումներէ կը խոսուի, երեկ Միլանօ քաղաքի երկու խումբերը՝ Ա. ՍԵ. եւ Ինթեր, որոնք ձակատեցան իրարու դէմ, «բաւականացան» 0-0 արդիւնքով:

Գարձի մրցումին վստահաբար անոնք նոյն արդիւնքով պիտի չբարարուին, որովհետեւ անոնցմէ մէկը անպայման դուրս պիտի մնայ մրցաշարէն:



Ռոնալտո

Կիսաւարտական հանգրուանի երկրորդ մրցումը, որ տեղի ունեցաւ «Սանթիակո Պէննակո»ի մէջ, վերջ գտաւ Ռեալ Մատրիտի յաղթանակով. անիկա 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Եուվենթուսը: Պրաչիցիներ Ռոնալտո (23րդ) եւ Ռոպերթօ Քարլոս (73րդ) նշանակեցին Ռեալի կոլերը, իսկ ֆրանսացի Թրեպէկէ (45րդ)՝ իտալական կապմին կոլը:

Բ. կիսախաղին սկիզբը, Ռոնալտո, որ վիրաւորուելով փոխարինուեցաւ Փորթիյոլով, դարձի մրցումին շատ հաւանաբար չկարենայ դաշտ ներկայանալ:

Նշենք, թէ դարձի մրցումները տեղի պիտի ունենան գալ շաբաթ: Աւարտական մրցումը տեղի պիտի ունենայ Մայիս 28ին, Մանչեսթըր Եունայթեդի «Օլդ Թրեֆորտ» դաշտին մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՈՆԿ ՖՈՒՈՒՇՈՒ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ

Հ. Մ. Գ. ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՀԻ 16 ՄԵՏԱԼՆԵՐ

Անցեալ շաբաթավերջին Երեւանի մէջ տեղի ունեցան Հայաստանի Քոնկ Ֆու Ռու Շուի ախոյեանութեան մրցումները, որոնց մասնակցեցան աւելի քան 300 մարզիկներ՝ Հայաստանի պանպան ակումբներէն:

Մրցումներու աւարտին, փայլուն արդիւնքներ արձանագրեցին Հ. Մ. Գ. Միութեան Երեւանի, Վանաձորի, Ախթալայի եւ Գիւմրիի մասնաճիւղերը: Անոնք ապահովեցին 7 ոսկի, 4 արծաթ եւ 5 պրոնզ մետալներ:

ԹԵՆԻՍ. ՊԵՐԼԻՆ

ՍԱՐԻ - ԳԱՅԵԱՆԵ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ԱՆՑԱԻ Գ. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Պերլինի մէջ (Գերմանիա) տեղի ունեցող թենիսի աղջկանց միջազգային մրցաշարին Բ. հանգրուանի մրցումներուն, որոնք տեղի ունեցան երեկ, գլուխգործոց Մարի-Գայետանէ Միքայէլեան ապահովեց Գ. հանգրուանին իր տոմարը 6-7, 6-2 եւ 6-1 արդիւնքով պարտութեան մատնելէ տք սպանացի Վիլմինիա Ռուանօ Փաքուալը:

Ա. հանգրուանին, 19 տարեկան Միքայէլեան կարելորդ յաղթանակ մը արձանագրեց, երբ 6-1 եւ 7-5 արդիւնքով պարտութեան մատնեց 13րդ դասուած Այի Սուկիանան (ձափոն):

«ՎԱՍՆՅ ՉԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒՆ ԱՅՏԱԳԻՐԵՐԸ

- Ժամը 8:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- Ժամը 8:45 «Աստղեր»
- Ժամը 11:00 «Ջաւախքը երկէ եւ այսօր»
- Ժամը 11:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
- Ժամը 12:00 «Մարտը պահեցը հայերէնը»
- Ժամը 3:00 Արաբերէն յայտագիր. հարցազրոյց՝ Մարի Թերեզ Սալիպի հետ. Թելէ Լիպանի մէջ 10 տարուան իր փորձառութեան եւ քանատական կայանի մը հետ իր գործակցութեան մասին.
- Ժամը 5:00 Հարցազրոյց լրագրող Սարուէ Դանժի հետ (կրկնօրեան)
- Ժամը 6:00 «Հայ երգաշարի»
- Ժամը 8:00 «Ընարային»

ԱՀԱԲԵԿԻՉՆԵՐ ՏԱԿԱԻՆ ԿԸ ԳՈՐԾԵՆ ԶԵՉԵՆՈՅ ՄԵՋ

Կ'ԸՍԵ ՌՈՒՄԻՆՈՅ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ

ՄՈՍԿՈՒԱ, 7 (ԱՅՓ).— Արտաքին օժանդակություն վայելող ահաբեկիչներ տակաին կը գործեն Չեչենիոյ մէջ եւ այլ երկիրներէ դրամ ու կէնք կը ստանան, յայտնած է Ռուսիոյ ներքին գործոց նախարար Պորիս Կրիլլով Չորեքշաբթի օր:

«Չեչենիա ահաբեկչութենէ վերո չէ տակաին», ըսած է ան, յայտնելով, որ անիկա դրամ, կէնք եւ «գաղափարախօսական» պօրակցութիւն կը ստանայ արտաքին երկիրներէ:

Այս խոստովանութիւնը տեղի կ'ունենար Չեչենիոյ մէջ սահմանադրութեան առնչուող հանրաքուէի մը կայացումէն աւելի քան ամիս մը ետք: Օրին, ռուսական իշխանութիւնները հանրաքուէն ներկայացուցած էին իրրեւ փաստ, թէ անջատողական հանրապետութեան մէջ կացութիւնը բնականոն դառնալու ընթացքին մէջ կը գտնուի եւ թէ անջատողականները պարտութեան մատնուած են:

Մայիս 23ին կայացած հանրաքուէին չեչեններ մեծ համեմատութեամբ հասանութիւն տուած են նոր սահմանադրութեան մը եւ ճամբան հարթած՝ գալ տարի կայանալիք նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններուն:

Այսուհանդերձ, ռուսական ուժերուն եւ չեչեն ռուսամետ ուստիկաններու եւ պաշտօնատարներու դէմ մերթ մերթ յարձակումները կը շարունակուին: Չորեքշաբթի առաւօտուն 4 ուստիկաններ սպաննուած են:

Անոնք յարձակումի ենթարկուած են մայրաքաղաք Կրովնիի հարաւարեւմտեան Ուրուս-Մարթան շրջանին մէջ:

ՎՐԱՍԱՆԻ ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Նախարար Կրիլլով նշած է, որ Ռուսիա առաջարկած է ահաբեկչական կազմակերպութիւններու մասին տեղեկութեանց միջապգային կեդրոն մը հիմնել՝ Փարիզի մէջ այս շաբաթ կայացած Ութերու ճարտարարունեստականացած երկիրներու խմբակին արդարութեան եւ ներքին գործոց նախարարներու մէջ ժողովին:

Ժողովին մասնակցած նախարարները «համաձայն գտնուած են, թէ միջապգային ահաբեկչութեան կեդրոններ կը գտնուին տակաին Չեչենիոյ եւ նաեւ Ռուսիոյ մէջ»:

Ռուսիա Վրաստանը ամբաստանած էր ըսելով, թէ անիկա չեչեն ընթաններու արտօնած է, որ օրէնքն դուրս եղող Փանքիսի կիրճը իրրեւ կեդրոն օգտագործեն:

ՓԱՔԻՍԱՆ ԵՒ ՀՆԴԿԱՍԱՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՍԵՐՉԵՑԱՆ ՓՈՐՉԵՐԸ

ԻՍՒԱՍՄԱՊԱՏ, 7 (ԱՅՓ).— Մինչ ամերիկացի պատուիրակ Ռիչըրտ Արմիթէյճ Չորեքշաբթի օր հարաւային Ասիա կ'ուղղուէր, Փաքիստան կը շարունակէր քայլերու դիմել՝ Հնդկաստանի հետ դիւանագիտական մերձեցման նպատակով, յայտարարելով, թէ դեռսպաններու մարզական եւ փոխադրամիջոցի մարզերուն մէջ կապերը լիովին պիտի վերահաստատուին:

Վարչապետ Չաֆարուլլա ժամալի երեքշաբթի գիշեր դեռսպաններու փոխանակում առաջարկած է եւ յայտարարած, թէ երկաթուղիի եւ օդային սպասարկութիւնները պիտի վերսկսին, հնդկ բոլոր բանտարկեալները ազատ պիտի արձակուին, ինչպէս նաեւ մարզական կապերը պիտի վերակսին:

Քայլերուն նպատակը «Հնդկաստանի հետ իմաստալից տիպարի մը ընթացող պատրաստել է», ըսած է ժամալի, մամլոյ ստույխի մը ընթացքին:

Յայտարարութիւնները տեղի կ'ունենային շրջանին մէջ աննախընթաց «ձիւնհալի» միջոցառումները, որ ընթացքի մէջ դրուած էր Հնդկաստանի վարչապետ Աթալ Դեւարի Վաճփայիի Ապրիլ 18ի անակնկալ այն յայտարարութեանէն ետք, թէ Համաձայն է Փաքիստանի երկարատեւէն ի վեր կատարած բանակցութեանց առաջարկին:

Երկու երկիրներուն յարաբերութիւնները 17 ամիսէ ի վեր անել կացութեան մատնուած են: Տարի մը առաջ անոնք կորիզային պատերազմի մը սեմին Հասած էին: Հնդկաստան խզած կամ նուազեցուցած էր իրենց միջեւ յարաբերութեանց մեծ մասը, Փաքիստանը ամբաստանելէ ետք իր խորհրդարանին վրայ մահացու յարձակումի մը ետեւ կանգնած ըլլալու յանցանքով: Անիկա խլած էր 9 զոհ եւ 5 զինեալները, որոնք յարձակումին զիմած էին:

ԱՍՆԱՐ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԷ ՄԱԿԻՆ՝ ԱՀԱԲԵԿԻՉԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՒ ԶԱՆԿ ՄԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

Սպանիոյ վարչապետ Խոսէ Մարիա Ասնար կոչ ուղղեց ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին՝ պատրաստելու ցանկ մը ահաբեկչական շարժումներու: Մակայի ՄԱԿի մէջ Բրիտանիոյ դեսպանը ըսաւ, որ դժուար պիտի ըլլայ պատրաստութիւնը այսպիսի անուանացանկի մը, որովհետեւ ՄԱԿի անդամները նախ պէտք է համաձայնին ահաբեկչութեան սահմանումին մասին, որ ցարդ նոյնը չէ բոլորին մօտ:

Ասնար, որ կը խօսէր Ապահովութեան Խորհուրդի նիստին, օրինակ չտուաւ անուանացանկին վրայ դրուելիք շարժումներէն: Կը նախատեսուի, որ Ասնար Ուաշինկթոնէ պահանջէ ամերիկեան անուանացանկին վրայ դնել պատրաստութիւնը Պաթաւունա շարժումը: Ասնար այս խնդրանքը պիտի ներկայացնէ նախագահ Ճորձ Պուշի հետ ունենալիք հանդիպումին ընթացքին:

ԻՄՐԱՅԷԼ ՆՇԵՑ ԻՐ ԸԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 55ԱՄԵԱԿԸ՝ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՂ ԲԱՄՈՒՄՆԵՐՈՒ ԵՒ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄՅՈՒՈՐՏԻ ՄԵՋ



Ռամալլայի մէջ՝ իսրայէլացի զինուորներ խուզարկութեան պահուց

Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը վերսկսելու պնդումները յայտարարեց, որ 55ամեակը իսրայէլի երէկ նշեց հիմնադրութեան 55ամեակը:

Իսրայէլեան բանակի հրամանատար Կոր. Մոշէ Եսայրոն յայտարարեց, որ պաղեստինեան 31ամեակ ինքիֆաթային յոռեզոյք բաժինը աւտուած է: Եսայրոնի խօսքերը յատուկութիւն կը ներշնչեն յատկապէս իսրայէլացիներու համար, հակառակ անոր որ արիւնահեղութիւնը ամբողջութեամբ չէ դադարած:

Վարչապետ Արիէլ Շարոն, իր կարգին, իսրայէլացի նահատակ պիտուորներու նուիրութեամբ հանդիսութեան մը ընթացքին ըսաւ, որ նոր առիթ մը կայ վերջ տալու իրէական պետութեան ամէնէն ծանր տագնապներէն մէկուն: Ան անեցուց սակայն, որ այդ տագնապը լուծելու յոյսը կ'իջնայ բանակին վրայ, եւ ոչ անպայման ամերիկեան հովանաւորութիւն վայելող խաղաղութեան ճամբու քարտէսին վրայ: Շարոն անեցուց, որ երդուած է կարելի եղած բոլոր միջոցներուն դիմելու՝ երկիրը դէպի խաղաղութիւն առաջնորդելու համար:

Մասնատիրոջ ներշնչող այս մթնոլորտը սակայն չկասեցուց բախումներն ու իսրայէլեան բանակին գործողութիւնները պաղեստինեան շրջաններուն մէջ:

Կապալի Խան Եունէս գաղթականային մէջ սպանուեցաւ 18ամեակ մանուկ մը, երբ մօտակալ բնակեցման վայրի մը շուրջ հսկող պահուցութեան ուժերը կրակ բացին պաղեստինեան գաղթականային վրայ: Իսրայէլեան բանակին մէկ բանբերը ըսաւ, որ պաղեստինցիներ երկու անգամ կրակ բացին բնակեցման վայրի վրայ եւ թէ պիտուորները պարտաւորուած էին հակադարձելու:

Այսրոյորդանանի Նապոլու քաղաքին մօտ սպանուեցաւ Համասի պինեալ թեւի անդամներէն՝ Ամին Մանգալաուին, որ ժամանակէ մը ի վեր կը հետապնդուէր:

Միւս կողմէ, Համասի հիմնադիր ղեկավար շէյխ Սիմէտ Եսաին պնդեցուց իսրայէլը, դիտել տալով, որ իսլամական շարժումը պիտի շարունակէ յարձակումները իրէական պետութեան դէմ մինչեւ վճռական ու վերջնական ճակատամարտը: Շէյխ Եսաին ամբաստանեց պաղեստինցի վարչապետ Մահմուտ Ապպալը, որ խոստացած է պինսափ ընել պինեալ ծայրայեղական շարժումները: Շէյխ Եսաին ըսաւ, որ Ապպաս այս ձեռով «անձնատուութեան քաղաքականութիւն» կ'որդեգրէ:

(ԱՅՓ)

ՍԱՐՍԻ ԳԾՈՎ ԲՈԼՈՐԻՆ ՈՒՇԱՂՈՒԹԻՒՆԸ ԿԵՂՈՆԱՑԱԾ Է ԶԻՆԱՍԱՆԻ ՎՐԱՅ

Մինչ աշխարհի տարածքին բազմաթիւ երկիրներու մէջ ՍԱՐՍԻ դէմ պայքարի ճիգերը թափ կը տանան, Չինաստան երէկ պնդեցուց, թէ գիւղական շրջաններուն մէջ հիւանդութեան հետ կ'ընդհանրուէն անցնող մեծ տագնապ կը դիմագրաւէ, նկատի ունենալով, որ տեղէն-տեղ փոխադրուող աշխատատիրները կը սպառնան ՍԱՐՍԻ տարածել այդ շրջաններուն մէջ:

Չինաստանի մէջ երէկ յայտարարուած է, թէ 5 նոր մահ եւ 159 նոր պարագաներ արձանագրուած են, մինչ երկրին վարչապետը՝ Ուէն Ճիապան կը պնդեց, թէ հիւանդութիւնը անսահմ կերպով կը տարածուի գիւղական շրջաններուն մէջ, որոնք պաշտպանութեան անհրաժեշտ միջոցառումները չունին:

Անցնող քանի մը շաբաթներուն, տեղէն-տեղ փոխադրուող աւելի քան 800 հազար աշխատատիր վերադարձած է կեդրոնական Հենան նահանգը, որ երկրին ամէնէն աւելի բնակիչ ունեցող շրջաններէն մէկն է, մինչ մէկ միլիոն ուրիշներ մօտակալ Սիճուի նահանգը վերադարձած են:

Մինչեւ երէկ, Չինաստանի մէջ ՍԱՐՍԻ պատճառով մահերուն թիւը 219 եւ վարակուած պարագաներու թիւը 4560 էր:

Նահանգային պաշտօնատարներու հետ ժողովի մը ընթացքին, Ուէյն յայտնած է, թէ երկիրը մեծ մարտահրաւիրներ կը դիմագրաւէ գիւղական շրջաններուն մէջ ՍԱՐՍԻ սանձելու իմաստով:

Մայրաքաղաք Պեյճինկի մէջ, բժիշկներու եւ հիւանդանոցներու պակասը մղած է մասնագէտները պնդեցուց, թէ բժիշկներու եւ հիւանդանոցային անկողիններուն տագնապը յաւելալով մահերու դուռ պիտի բանայ:

Իսկ Շանկիայի մէջ, որ Չինաստանի առեւտրական կեդրոնը եւ ամէնէն հոծ բնակչութիւն ունեցող քաղաքն է, մեկնաբաններ պնդեցուց, որ մօտակալ Նանճինկի շրջանէն հիւանդութեան տարածումը կրնայ անդամալուծել երկրին արդէն իսկ նախաձայնուած տնտեսութիւնը:

Նանճինկի մէջ 10 հազար հոգի մեկուսացուած է:

Միւս կողմէ, Առողջապահութեան Համաշխարհային Կազմակերպութիւնը յայտնած է, որ Չինաստան մեծ կարեւորութիւն ունի՝ ՍԱՐՍԻ տարածումը կասեցնելու մէջ:

Հիւանդութիւնը արդէն իսկ աւելի քան 480 պոն խլած է եւ աւելի քան 6800 հոգի վարակած է շուրջ 30 երկիրներու մէջ, Կուանկոնոն նահանգին մէջ ծայր տային ի վեր (անցեալ Նոյեմբերին):

Հոնկ Բոնկի մէջ արձանագրուած նորագոյն պահերով, ՍԱՐՍԻ պատճառով մահացածներու թիւը երէկ 204ի բարձրացած է, 1654 վարակումներով:

Մտավախութիւնները կը բարձրանան նաեւ Թայուանի առնչութեամբ, որ նախապէս կը կարծուէր, թէ անիկա համեմատաբար առանց մեծ վնասի փրկուած է համաճարակէն, սակայն հոն նուազ քան մէկ շաբաթուն մէջ մահերու թիւը քառապատկուած է:

Միացեալ Նահանգներ երեքշաբթի օր խոստացած են Չինաստանի թեքնիք օժանդակութիւն տալ՝ ՍԱՐՍԻ դէմ պայքարելու նպատակով:

Ղապախտան երէկ յայտնած է, թէ Չինաստանի հետ իր սահմանները փակած է, արգիլելու համար ՍԱՐՍԻ թափանցումը:

Մինչ այդ, երէկ հրապարակուած տեղեկագիրի մը արդիւնքներուն համաձայն, ՍԱՐՍԻ վարակուած 60 տարեկանէն վեր անձերուն 50 առ հարիւր մահանալու համահավասարութիւն կը դիմագրաւէ:

Ըստ Ա. Հ. Կազմակերպութեան եւ ամերիկեան Սի. Տի. Սի. կեդրոնին, ՍԱՐՍԻ պատճառով մահերու համեմատութիւնը 5էն 6 առ հարիւր է:

ԻՐԱՆ

ԲԱՐԵԿԱՐԳՉԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱՆՆԵՐ ԿԸ ՉԳՈՒՇԱՅՆԵՆ, ԹԵ ԵՐԿԻՐԸ ՉԳԱՅՈՒՆ ԿԱՅՈՒԹԵԱՆ ՄԵՋ ԿԸ ԳՏՆՈՒԻ

ԹԵՀՐԱՆ, 7 (ԱՅՓ).— Իրանցի բարեկարգչական երեսփոխաններ Չորեքշաբթի օր կոչ ուղղած են երկրին ուժեղ պահպանողական կողմին, որ բարեկարգումներու առիթ տան եւ արտաքին աշխարհին հետ յարաբերութիւնները բնականոն դարձնեն, այլ լայն անոնք կրնան Սատտամ Հիւսէյնի ճակատագիրին նման ճակատագիր մը դիմագրաւել:

290 աթոռ հաշուող խորհրդարանին 153 երեսփոխաններու կողմէ ստորագրուած բաց նամակի մը մէջ, որ խորհրդարանին մէջ կարդացուած է, երեսփոխանները պնդեցուց, թէ Իրան «պգայուն կացութեան մը» մէջ կը գտնուի եւ թէ քաղաքական իշխող շրջանակները կրնան կորսնցնել մեծամասնութեամբ բարեկարգումներու ի նպաստ քուէարկած ժողովուրդի մը պօրակցութիւնը:

Արտաքին յարաբերութեան բնականոնացման գծով նամակը նկատի առած է նաեւ Մ. Նահանգներու հետ կապերը, արժարժեղով նիւթ մը, որ հետզհետէ աւելի ներքին բանակէճերու առարկայ կը դառնայ:

«Իրանցիներու մեծամասնութիւնը բարեկարգումներու կը սպասէ, սակայն անոնք յանգած են այն եզրակացութեան, թէ իրենց քուէները անիմաստ են», գրած են երեսփոխանները, նշելով Փետրուարին կայացած քաղաքականական ընտրութիւններուն մասնակցութեան փոքր համեմատութիւնները: Չափաւորական նախագահ Մոհամէտ Քարէմիի հետեւորդները օրին աննախընթաց պարտութիւն մը կրած էին:

Անոնք խօսած են նաեւ Իրաքի վրայ ամերիկեան զլխաւորութեամբ յարձակումին մասին, որուն ընթացքին «Իրաքի ժողովուրդը որեւէ հակադարձութիւն չունեցաւ, մինչ երկիրը կը գրաւուէր»:

«Ամերիկեան ուժերուն Աֆղանիստան հաստատումն է Իրաքի գրաւումնէն ետք, «սպառնալիքներ սահմաններուն հասաւ», ըսած է նամակը, ակնարկելով նախագահ Ճորձ Պուշի «չարտութեան առանցք»ին մէջ Իրանի տեղին:

Անոնք կոչ ուղղած են նաեւ «միջապգային գետնի վրայ աւելի գործօն դիւանագիտութեան, որուն նպատակը պիտի ըլլայ այլ երկիրներու հետ յարաբերութեան բնականոնացումը»: Ակնարկութիւնը կը վերաբերի նաեւ Մ. Նահանգներուն:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՔՈՐԷԱ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԷ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻՎ ԿԵՐՋ ՏԱԼ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՔՈՐԷԱՅԻ ՆԵՏ ԼԱՐՈՒԱԾՈՒԹԵԱՆ

Հարաւային Քորէա երէկ կոչ ուղղած է Մ. Նահանգներու հետ յարուած կացութիւնը բարելուելու նպատակով առաջին քայլին դիմելու, առաջարկելով անոր, որ ջնջէ կորիկային իր ծրագիրը:

Արտաքին գործոց նախարար Եուն Եանկ Քուան անհաւանական նկատած է, որ Մ. Նահանգներ Հիւսիսային Քորէայի կողմէ պահանջուած ապահովութեան երաշխիքը տան, թէ անիկա նախ կորիկային իր ծրագիրին վերջ տալով:

Հիւսիսային Քորէա սպառնացած է կորիկային մարտի բոլոր բանակցութիւններէն հրաժարիլ, եթէ Մ. Նահանգներ դրակասօրէն չհակադարձեն իր առաջարկին, ըստ որուն կորիկային իր ծրագիրին պիտի հրաժարի տնտեսական եւ դիւանագիտական պիտուներու փոխարէն:

Մինչ այդ, Հիւսիսային Քորէա երէկ միջքորէական պայքարին մասնակցութեան կոչ ուղղած է՝ ետ մղելու համար «ամերիկեան ոճրային փորձերը» Փիոնկեանկի դէմ պատերազմ մը շղթայակերտելու համար:

«Ուաշինկթոն Թայմզ» թերթը երէկ հաղորդած է, թէ Հիւսիսային Քորէա անցելու միւս Պեյճինկի մէջ կայացած Մ. Նահանգներու հետ եռակողմանի բանակցութեան ընթացքին սպառնացած է կորիկային իր պէնքերը արտածել, յաւելալով պէնքեր արտադրել կամ փորձարկումներու ձեռնարկել:

«Նիւ Եորք Թայմզ» թերթը կիրակի օր հաղորդած է, թէ ամերիկեան վարչապետը Հիւսիսային Քորէայի հետ իր քաղաքականութիւնը փոխած է որոշ շափով, աւելի կեդրոնականով անոր կողմէ կորիկային նիւթերու արտածումը արգիլելու վրայ, քան կորիկային պէնքերու ծրագրին ջնջումին:

ՔՈՆՏՈԼԻԶԱ ՌԱՅՍ Կ'ԱՍԲԱՍԱՆԷ ՅՐԱՆՍԱՆ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱՆ

ՄԱՏՐԻՏ, 7 (ԱՅՓ).— Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշի խորհրդատուներէն՝ Քոնտոլիզա Ռայս ամբաստանեց Յրանսան եւ Գերմանիան, դիտել տալով որ անոնք «ՕԹԱՆը պատանդ վերցուցին Իրաքի պատերազմին»:

Սպանական «Էլ Փալմա» օրաթերթին կողմէ հրապարակուած հարցազրոյցի մը մէջ, ազգային անվտանգութեան հարցերու խորհրդատու ըսաւ, որ Ուաշինկթոն կը շարունակէ դաշնակից մնալ Պերսիի եւ Փարսիի, որոնք կեցուածք սակայն պատերազմին ընթացքին մտահոգիչ էր, որովհետեւ անոնք փորձեցին արգիլել ՕԹԱՆի օժանդակութիւնը Թուրքիոյ, յատկապէս անոր ապահովութիւնը ամբողջելու աշխատանքին մէջ: Ռայս շեշտեց, որ որեւէ երկիր իրաւունք չունի ՕԹԱՆը պատանդ դարձնելու: